# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 19 (1519) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 28, 2011
VOLUME 31, NO. 19 (1519) SATURDAY, MAY 28, 2011

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ 14-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ



Կիրակի, Մայիս 15-ին Փասատինայի Հնչակեան կեդրոնին մէջ, տեղի ունեցաւ Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի շրջանի 14-րդ պատգամաւորական ժողովը, մասնակցութեամբ շրջանի մասնաճիւղերը ներկայացնող պատգամաւորներուն: Սոյն ժողովին ներկայ էին նաեւ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեան, Կեդրոնական Վարչութեան անդամ ընկերներ՝ Վազգէն Գալթագճեան, Տոքթ. Համբիկ Սարաֆեան եւ կուսակցական այլ հիւրեր:

Կուսակցութեան քայլերգի ունկնդրութենէն ետք, Պատգամաւորական ժողովը անցաւ իր օրակարգին: Ժողովականները իրենց աշխոյժ մասնակցութիւնը բերին օրակարգի մէջ նշուած հարցերու քննարկման, որոնք առաւելաբար կը վերաբերէին ներքին կազմակերպչական հարցերուն, ազգային-քաղաքական գործունէութեան արժեւորումին, ինչպէս նաեւ կուսակցութեանս հովանաւորութեան ներքեւ գործող տարբեր կառոյցներու աշխուժացումին եւ համագաղութային այլ խնդիրներուն:

Առաջադրուած բոլոր հարցերը քննարկուեցան կառուցողական ու համերաշխ մթնոլորտի մէջ եւ առնուեցան համապատասխան որոշումներ՝ մշակելով յառաջիկայ շրջանի համար գործունէութեան նոր ծրագիրներ:

Պատգամաւորական ժողովի աւարտին տեղի ունեցաւ նոր Վարիչ Մարմնի ընտրութիւն, հետեւեալ կազմով՝ Լենա Մանուկեան, Գաբրիէլ Մոլոյեան, Թովմաս Եթերեան, Կէրի Սինանեան, Միհրան Խաչատուրեան, Սուրէն Խուտանեան, Վահէ Աջապահեան, Վազգէն Խոտանեան եւ Վարդան Քէօրողլեան: Ժողովը աւարտեցաւ «Տուր Ձեռքդ Ընկեր» կուսակցական մաղթերգով:

Նորընտիր Վարիչ Մարմինը, իր անդրանիկ նիստին, որուն ներկայ էր Պատգամաւորական ժողովի դիւանը, միաձայնութեամբ Վարիչ Մարմնի ատենապետ ընտրեց ընկ. Վազգէն Խոտանեանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՍԿՍԱՒ ՔՆՆԱՐԿԵԼ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՀԱՐՑԸ

*Մայիս 25-ին, Հայաստանի Ազգային Ժողովը սկսաւ համաներման մասին նախագիծի քննարկումը:*

*Հայաստանի անկախութեան 20-րդ տարեդարձի առթիւ համաներում յայտարարելու առաջարկով գործող նախագահ Սերժ Սարգսեան Մայիս 20-ին դիմած էր խորհրդարանին:*

*Համաներման որոշումը Ազգային ժողովի կողմէ հաստատուելու պարագային, կը կիրառուի այն անձերու նկատմամբ, որոնք «յանցագործութիւն» կատարած են մինչեւ 2011 Թուականի Մայիսի 1-ը ու կ'ընդգրկէ Մարտի 1-2-ի առնչութեամբ կալանաւորուած ընդդիմադիր գործիչներ՝ Սասուն Միքայէլեանը, Արա Յովհաննիսեանը եւ Նիկոլ Փաշինեանը:*

*Հայ Ազգային Գոնկրէսի Ապրիլ 28-ի հանրահաւաքի ընթացքին, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան համոզմունք յայտնած էր, որ մինչեւ Մայիս 31-ը ազատ կ'արձակուին մնացեալ քաղաքական բանտարկեալները:*

*Ազգային Ժողովէն ներս հնչե-*

*Շար.ը էջ 4*

## ԻՆԹԸՐՆԷԹԻ ՎՐԱՅ Ի ՅԱՅՏ ԵԿԱՆ ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ ՆՈՐ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

*Ինթըրնէթի «YouTube» եւ ընկերային այլ ցանցերու վրայ ի յայտ եկաւ 2008 Թուականի Մարտ 1-ի սպանդին վերաբերող նոր տեսարաններով ժապաւէն մը: «Ահա թէ ինչպէս են կրակում 2008 Թուականի Մարտի մէկին» վերնագրով ժապաւէնիէնի վրայ կը տեսնուի, որ ջրցան մեքենայի կողքին հաւաքուած իրաւապահներու մէջէն, անծանօթ անձիք կրակոցներ կ'արձակեն ոչ թէ օդը, այլ հորիզոնական ուղղութեամբ: Տեսարանները նկարուած են վերէն, գիշերուայ ժամերուն:*

*Մարտիմէկեան իրադարձութիւններու ուսումնասիրման նախկին փաստահաւաք խումբի ընդդիմադիր անդամ Անդրանիկ Քոչարեան «Ազատութիւն» ռատիոկայանին կարծիք յայտնեց, որ ասոնք «շատ լուրջ կադրեր» են, «մեծ ինֆորմացիա» կը պարունակեն եւ Յատուկ Քննչական ծառայութիւնը*

*Շար.ը էջ 5*

## ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ



*Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայոց Առաջնորդարանը ուրախութեամբ կը ծանուցանէ ընտրութիւնը իր նոր Թեմակալին՝ յանձին Արհիապատիւ Միքայէլ Եպս. Մուրատեանի:*

*Ան կը յաջորդէ Արհիապատիւ Մանուէլ Եպս. Պաթագեանի, որ սոյն Թեմը կը ղեկավարէ 2001 Թուականէն սկսեալ, եւ որու պաշտօնավարութիւնը վերջ կը գտնէ այս տարի, կանոնական տարիքի Թեւակոխումին պատճառով:*

*Նորընտիր Առաջնորդը ծնած է Պէյրութ՝ 1961-ի Յուլիս 5ին, զաւակը՝ Սարգիս եւ Թերէզ Մուրատեանի: Նախնական ուսումը ստացած է Զահլէի Անարատ Յղութեան Հայ Քոյրերու դպրոցը: 1973ին աշակերտած է Զմմառու Պատրիարքական Միաբանութեան կղերանոցին, հոն ստանալով միջնակարգ ու երկրորդական կրթութիւնը: 1981-1986 տարիներուն ուղարկուած է Հռոմ՝ Լեւոնեան Քահանայապետական Հայ Վարժարան, եւ ստացած է փիլիսոփայութեան եւ Աստուածաբանութեան վկայականները՝ յաճախելով Տոմինիկեան Հայրերու «Angelicum» Քահանայապետական համալսարանը: 1986-1987ին, Ֆրանսայի Լիոն քաղաքի «Institut Catholiquie» կաճառին մէջ հետեւած է երիտասարդներու հովուականի մասնագիտական դասընթացքներուն:*

*Ան քահանայական Ձեռնադրութիւնը ստացած է Փարիզ, 2 Հոկտեմբեր 1987ին, ձեռամբ Արհի. Գրիգոր Եպս. Ղապրոյեանի, որպէս անդամ Զմմառեան Կաթողիկոսական Միաբանութեան:*

*Հայր Միքայէլ Մուրատեան ստանձնած է հետեւեալ պաշտօնները. 1987-1988 փոխ-տեսուչ Զմմառու ընծայարանին: 1988-1989՝ փոխ-տեսուչ Հալէպի դպրեվանքին: 1989-1990՝ ժողովրդապետ Դամասկոսի Թագուհի Տիեզերաց*

*Շար.ը էջ 17*

## ԱՄԵՐԻԿԱՑԻ ԳՈՆԿՐԷՍԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՉ Կ'ԸՆԵՆ՝ ԱՒԵԼՑՆԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԵԼԻՔ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

*Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան մօտ 30 գոնկրէսականներ դիմած են Յատկացումներու ենթայանձնաժողովին ու կոչ ըրած՝ աւելցնելու 2012 ֆինանսական տարուայ համար Հայաստանին յատկացուելիք տնտեսական օգնութիւնը եւ զարգացման օժանդակութիւն տրամադրել Լեռնային Ղարաբաղին:*

*Ենթայանձնաժողովին յղուած՝ Մայիս 20 Թուակիր նամակին մէջ, Գոնկրէսի հայկական հարցերով համախմբումի անդամ Գոնկրէսականները, Ֆրէնք Փալոնի գլխաւորութեամբ, կոչ կ'ընեն Հայաստանի համար հաստատել առնուազն 60 միլիոն, Ղարաբաղի համար՝ 10 միլիոն տոլարի օգնութիւն:*

*Հայամէտ օրէնսդիրները իրենց նամակին մէջ կոչ կ'ընեն նաեւ հաւասարակշռել Հայաստանին եւ Ատրպէյճանին տրամադրուող ռազմական օգնութիւնը, վերացնել ԱՄՆ - Լեռնային Ղարաբաղ շփումներուն եւ հաղորդակցութեան խոչընդոտող արգելքները, վերականգնել Ղարաբաղի մասնակցութիւնը ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի շրջագիծէն ներս ընթացող բանակցութիւններուն եւ առնուազն 10 միլիոն տոլարի ռազմական օգնութիւն տրամադրել Հայաստանին:*

*Ամերիկայի նախագահ Պարաք Օպամայի առաջարկած՝ 2012-ի պիւտճէի նախագիծի համաձայն, յառաջիկայ ֆինանսական տարուայ համար կը նախատեսուի Հայաստանին յատկացնել 40 միլիոն տոլար: Բացի այդ, ԱՄՆ-ի վարչակազմը կ'առաջարկէ Հայաստանին ռազմական օժանդակութեան եւ ուսուցման ծրագիրներուն համար յատկացնել 3 միլիոն 450 հազար տոլար, ինչ որ մօտ կէս միլիոնով պակաս է Ատրպէյճանին յատկացուելիք գումարէն:*



**Գոնկրէսի Հայկական Համախմբումի ղեկավար՝ Ֆրէնք Փալոն**

# ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

*Իշխանութիւնների եւ Հայ Ազգային Կոնգրէսի «երկխօսութեան» նախավարժանքը կարծես թէ չի ստացւում: Ցամենայն դէպս՝ կողմերի դիրքորոշումներն այս պահին տրամագծօրէն հակադիր են: Իշխանութիւնները պնդում են, որ արտահերթ ընտրութիւնների մասին խօսք անգամ լինել չի կարող, իսկ Կոնգրէսը յայտարարում է, որ պատրաստ է բանակցել միայն այդ հարցի շուրջ:*

*Դատելով ամէն ինչից՝ բանակցային գործընթացն իսկապէս բարդ է լինելու, ուստի ճիշդ կը լինէր, եթէ կողմերը նախ համաձայնեցնէին այսպէս կոչուած «կարգաւորման հիմնարար սկզբունքները»: Օրինակ՝ նախ պէտք է արձանագրել, որ խնդիրը լուծուելու է միջազգային նորմերի եւ օրէնքների շրջանակներում (Հայաստանը Եւրոխորհրդի անդամ է, եւ Հայաստանի օրէնքները չեն հակասում միջազգային նորմերին), յետոյ՝ պէտք է վերադարձնել պատանդներին եւ ռազմագերիներին, յետոյ վերականգնել փոխադարձ վստահութիւնը եւ այլն: Բայց քանի որ այս պահին ամենաակտուալը «պատանդների եւ ռազմագերիների» հարցն է, հենց դրանից էլ սկսենք: Արդեօ՞ք Սերժ Սարգսեանը «պատանդների եւ ռազմագերիների» հետ վարւում է միջազգային նորմերին համապատասխան: Իհարկէ ոչ. նրանք զրկուած են նամակագրութեան իրաւունքից, գերութեան ընթացքում նրանց ունեցուածքը խլւում է եւ այլն: Այսինքն՝ այս հարցում Սերժ Սարգսեանն արդէն իսկ խախտել է միջազգային նորմերը:*

*Անցնենք առաջ: Յաջորդ հիմնարար սկզբունքը երեւի պիտի լինի այն, որ Հայաստանում իշխանութիւնը ձեւաւորուի ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութիւնների միջոցով: Բայց արդեօ՞ք իմաստ ունի, որ Կոնգրէսն այս հարցով բանակցութիւններ վարի իշխանութիւնների հետ: Բանն այն է, որ եթէ իշխանութիւններն այս թեմայով բանակցութիւններ են սկսում (ասենք՝ «տղավարի» պայմանաւորւում են, որ յաջորդ ընտրութիւններն արդար են լինելու), դա նշանակում է՝ ընդունում են, որ նախորդ ընտրութիւններն արդար չեն եղել: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ Սերժ Սարգսեանը լեգիտիմ չէ, եւ լաւագոյն դէպքում բանակցութիւններին կարող է մասնակցել որպէս «դէ ֆակտօ նախագահ»: Իշխանութիւնները, հասկանալի է, այդ քայլին չեն գնայ: Շատ-շատ՝ կը յայտարարեն, որ նախորդ ընտրութիւնների ժամանակ եղել են առանձին թերութիւններ, եւ իրենք խոստանում են ամէն ինչ անել, որ դրանք չկրկնուեն: Բայց մենք հօ գիտենք, որ ոչ թէ «առանձին թերութիւններ» են եղել, այլ զանգուածային ընտրակեղծիքներ, որոնք հանգեցրել են իշխանութեան բռնազաւթման: Հիմա հարց է ծագում՝ Կոնգրէսը կը հաւատա՞յ իշխանութիւնների այդօրինակ հաւաստիացումներին:*

*Այստեղից էլ սահուն անցում կատարենք երրորդ հարցին՝ «կողմերի միջեւ փոխադարձ վստահութեան վերականգնմանը»: Ինչի՞ հիման վրայ պիտի վերականգնուի այդ վստահութիւնը: Սերժ Սարգսեանն իր կառավարման 3 տարիներին այդ ի՞նչ է արել, որի շնորհիւ մարդիկ պիտի հաւատան նրան: Ոեւէ ընտրակեղծարար յայտնուե՞լ է բանտում, Մարտի 1-ի կազմակերպիչներից ոեւէ մէկը պատժուե՞լ է, տնտեսութեան մէջ եղե՞լ է գոնէ մի ոլորտ, որտեղ մենաշնորհը վերանայ, իշխանութիւնների կողմից չվերահսկուող որեւէ հեռուստաընկերութի՞ւն է յայտնուել եթերում: Իհարկէ նման բաներ չեն եղել, հետեւաբար՝ «փոխադարձ վստահութեան վերականգնման» մասին խօսք լինել չի կարող: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ իշխանութիւնների հետ բանակցելու այլ թեմա չկայ, միակ թեման արտահերթ ընտրութիւններն են: Կամ բանակցում են այդ թեմայով, կամ չեն բանակցում ընդհանրապէս (վերջին տարբերակը շատ աւելի հաւանական է);*

*Հիմա «շախմատային պարտիայի» ընթացքի մասին: Խաղն իսկապէս ծանր է եւ ընթանում է երկուստեք կորուստներով: Կոնգրէսն ստիպուած եղաւ քայլեր կատարել եւ թուլացնել համակիրների մի մասի մարտական ոգին, Սերժ Սարգսեանը ստիպուած եղաւ քայլեր կատարել եւ խուճապ առաջացնել սեփական թիմակիցների շրջանում՝ միաժամանակ թշնամանալով Ռոբերդ Քոչարեանի ու նրա շրջապատի հետ եւ այլն: Թւում է՝ «հաւասար դիրքային պայքար» է, եւ կողմերի կորուստները համարժէք են: Իրականութիւնն այն է սակայն, որ Կոնգրէսի կորուստները վերականգնուող են, Սերժ Սարգսեանինը՝ ոչ: Ժողովուրդն այսպէս թէ այնպէս ոեւէ բան փոխելու յոյսը Կոնգրէսի հետ է կապում, եւ տուեալ փուլում պայքարի ակտիւացումը կամ պասիւացումը փոխում է ընդամէնը Կոնգրէսի ակտիւիստների տրամադրութիւնը, բայց ո՛չ թիւը: Մինչդեռ Սերժ Սարգսեանը կորցնում է «պախանի» հեղինակութիւնը, իսկ իշխանական համակարգը որպէս կրիմինալ բուրգ ընկալող նրա թիմակիցների համար դա չափազանց կարեւոր է:*

*Այսպէս թէ այնպէս՝ արդէն Մայիսի 31-ին պարզ կը դառնայ, թէ ի՞նչ յետագայ ընթացք է ունենալու «շախմատային պարտիան», ո՞ւմ կորուստներն էին այս ընթացքում աւելի ծանրակշիռ, եւ ումը՝ ժամանակաւոր:*

*«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*

Կոնգրէսն ստիպուած եղաւ քայլեր կատարել եւ թուլացնել համակիրների մի մասի մարտական ոգին, Սերժ Սարգսեանը ստիպուած եղաւ քայլեր կատարել եւ խուճապ առաջացնել սեփական թիմակիցների շրջանում

# ԻՆՉՊԷՍ Է ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԴԱՌՆՈՒՄ ԱՆՊԷՏՔ

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Հայաստանում բաւականաչափ հեգնանքի, երգիծանքի եւ քննադատութեան արժանացան տարբեր բարձրաստիճան պաշտօնեաների, հիմնականում վարչապետ Տիգրան Սարգսեանի դատողութիւնները Հայաստանի տարբեր ոլորտներում տարածաշրջանային եւ համաշխարհային կենտրոնների վերածելու մասին:*

*Ու թերեւս շատ դժուար է չհամաձայնել թէ՛ հեգնանքի, թէ՛ երգիծանքի, թէ սուր քննադատութեան հետ, երբ կենտրոններ ստեղծելու մասին ամպագոռգոռ յայտարարութիւններն արւում են մի ժամանակահատուածում, երբ Հայաստանում լուծում է պահանջում տարրական հացի խնդիրը, սովորական բիզնես վարելու խնդիրը, մարդու հասարակ հնարաւորութիւններն իրացնելու համար հաւասար եւ իրաւապէս պաշտպանուած միջավայր ստեղծելու խնդիրը, այլ կերպ ասած՝ ազատութեան եւ իրաւունքի խնդիրը:*

*Բայց, կենտրոնների առումով գուցէ անուղղակի, բայց կայ խնդրի թերեւս հակառակ կողմը: Կարծես ակնյայտ է, որ Հայաստանի հասարակութեան մէջ գոյութիւն ունի անլիարժէքութեան բարդոյթ: Հասարակութեան մի զգալի մասը համարում է, որ մենք աշխարհում անպէտք ենք, աշխարհին առաջարկելու բան չունենք, ընդառաջ գնալ էլ չենք կարող, որովհետեւ մեզ կուլ կը տան, որ մեզ վրայ ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում, իսկ եթէ մեզանով հետաքրքրւում են, ապա միայն Ղարաբաղը պոկելու կամ Թուրքիային պատժելու համար:*

*Այդ բարդոյթաւորուած մտածողութիւնը թոյլ չի տալիս լիարժէք կամ գոնէ համարժէք արդիականացման ենթարկել քաղաքական ուժերի եւ նրանց վարած գործընթացների հանդէպ հասարակական պահանջները: Այդ բարդոյթները նեղացնում են պահանջների շրջանակը, ինչն էլ հնարաւորութիւն է տալիս քաղաքականութեան սուբիեկտներին՝ հեշտութեամբ մանեւրել եւ խուսանաւել պատասխանատուութիւնից: Դրա հետեւանքով ձեւաւորւում է տեղում դոփող մի հասարակարգ, որտեղ քաղաքական պայքարը հիմնականում յանգում է ոչ թէ զարգացման, այլ արեւի տակ տեղ ունենալու միտումներին:*

*Այդ իրավիճակը յաղթահարելու համար թերեւս հասարակութեանը պէտք է ներշնչել իր կարողութիւնների, թէ՛ ներպետական, թէ՛ համաշխարհային համատեքստում իր արժէքի հանդէպ հաւատի զգացողութիւն: Խօսքն իհարկէ «համաշխարհային ազգի» մասին յայտնի մօտեցումները չեն, ոչ էլ համաշխարհային կենտրոնների մասին ձեւակերպումները: Բայց կարծես թէ աներկբայ է, որ պէտք է ձեւաւորուեն հասարակական քիչ թէ շատ գլոբալ թիրախներ:*

*Դա ամենեւին չի նշանակում, որ ասենք սահմանադրական կարգի հաստատումը, ազատութեան եւ իրաւունքի խնդիրը մանր թիրախներ են: Ամենեւին, դրանք հիմնաքարային թիրախներ են, սակայն այդ ամէնը պէտք է անպայմանօրէն ներկայացուի որպէս առաւել գլոբալ, տարածաշրջանային եւ համաշխարհային համատեքստում տեղաւորուող թիրախների հասնելու ճանապարհ: Այսինքն, այդ ամէնը պէտք է ներկայացնել ոչ թէ որպէս նպատակ, այլ որպէս միջոց - միջոց համաշխարհային գործընթացներում դերակատարում ստանձնելու համար:*

*Այդ դերակատարումներն ամենեւին չեն պայմանաւորւում պետութիւնների տարածքային մեծութեամբ, կամ հասարակութիւնների ֆիզիկական բազմամարդութեամբ, կամ հարստութեամբ եւ փողով: Մեր հասարակութեանը պէտք է ներշնչել, որ այդ ամէնն ընդամէնը լինում է արդիւնք, եթէ փոքր երկրներն ու ժողովուրդները կարողանում են իրենց կեանքը կազմակերպել մեծ որակներով:*

*Հայաստանն աշխարհում միայն Ղարաբաղը յանձնելու կամ Թուրքիայի գլխին կոտրուելու համար չէ, որ պէտք է: Աշխարհում որեւէ ժողովուրդ կամ պետութիւն ինքն է գծում իր պէտքութեան սահմանները, ինքն է որոշում, թէ ինքն ինչի համար է պէտք աշխարհին: Եւ ամէն ժողովուրդ ու պետութիւն անպէտքութեան է վերածւում այն դէպքում, երբ գիջում է իր այդ իրաւունքը կամ չի հաւատում դրա գոյութեանը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

Աշխարհում որեւէ ժողովուրդ կամ պետութիւն ինքն է գծում իր պէտքութեան սահմանները, ինքն է որոշում, թէ ինքն ինչի համար է պէտք աշխարհին

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆ

## «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԾ ԸՆՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՍԳԻՐՔԸ ՉՈՒՆԻ ԼԵԳԻՏԻՄՈՒԹԻՒՆ»

«Այսօր ընդունուած ընտրական օրէնսգիրքը չունի լեգիտիմութիւն, այն չի ընդունւում հասարակութեան կողմից, չի ընդունւում իրական ընդդիմութեան կողմից եւ նրան մաս կազմող «Ժառանգութեան» կողմից» ԱԺ յայտարարութիւնների ժամին ասաց ԱԺ «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանը՝ անդրադառնալով Մայիսի 24-ին երրորդ ընթերցմամբ ընդունուած ընտրական օրէնսգրքին:



Պատգամաւոր Արմէն Մարտիրոսեան

«Այս ընտրական օրէնսգիրքն ընդունուել է բացառապէս իշխանութիւնների կողմից եւ համապատասխանեցուել՝ իրենց ցանկութիւններին եւ «կազմուածքին»: Քաղաքական գործընթացներում ընտրական օրէնսգրքի պատճառով ծագած բոլոր անցանկալի հետեւանքների պատասխանատուն բացառապէս իշխանութիւններն են, եւ ոչ ոք հետագայում թող չփնտռի այլ մեղաւորներ: Բայց «Ժառանգութիւնը» չի «լուանում» իր ձեռքերը, այլ ասում է ձեզ, որ մեզ թողնում էք միայն պայքարի ուղին, եւ մենք ընդունում ենք այդ մարտահրաւէրը»,-նշեց Մարտիրոսեանը:

Ըստ նրա՝ իշխանութիւններն այդպէս էլ չունեցան քաղաքական այն բարի կամքը, որի առկայութեան պայմաններում կ՛ընդունուէին ընդդիմութեան առաջարկները: «Ժառանգութեան» կողմից որեւէ սկզբունքային առաջարկ, որն առաւել թափանցիկ եւ արդար կը դարձնէր ընտրութիւնները, պատգամաւորի խօսքով, տեղ չգտան այս նախագծում՝ այն դարձնելով բարեփոխման իմիտացիա: «Նախորդ ընտրութիւններում առկայ հիմնական խախտումները պահպանել են իրենց կրկնուելու հնարաւորութիւնները»,-նշեց Մարտիրոսեանը:

Նրա խօսքով՝ հասարակութեանը յուզող ընտրակեղծիքների մեխանիզմների մէջ մտահոգիչը յատկապէս քուէարկութեան օրուայ հետ կապուած գործընթացներն են, որոնք նորից լինելու են վերահսկողութիւնից հնարաւորինս հեռու, ինչը նորից բերելու է ընտրութիւնների արդիւնքների հետ կապուած նոր հիասթափութիւններ: Դա էլ իր հերթին բերելու է արտագաղթի:

## ՎԻԿՏՈՐ ԴԱԼԼԱՔԵԱՆ,- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԿԷՍԻՑ ԱՒԵԼԻՆ ԱՊՐՈՒՄ Է ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՇԵՄԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ»

Հայաստանի բնակչութեան կէսից աւելին ապրում է աղքատութեան շեմից այն կողմ: Այդ մասին խորհրդարանի ամբիոնից յայտարարել է պատգամաւոր Վիկտոր Դալլաքեանը:

Նրա խօսքով, մայրաքաղաքի բնակչութեան 80 տոկոսը հազիւ է ծայրը ծայրին հասցնում, բնակչութեան մեծ մասի համար մսամթերքը դելիկատես է:

«Բայց մարդիկ աւելի հիասթափւում են ոչ թէ վատ ապրելուց, այլ նրանից, որ աճող աղքատութեանը զուգահեռ աճում է իշխանաւորների ունեցուածքը՝ պետական սեփականութեան թալանի հաշուին»,- վստահ է պատգամաւորը:

«Ժողովուրդը ոչ միայն դժգոհում է աղքատութիւնից, այլեւ ընդվզում է այն երեւոյթի դէմ, որ պետութեան միջոցներու հաշուին հարստացածները օրէցօր աւելի են հարստանում, իսկ աղքատութեան ճիրաններում տառապողները գնալով աւելի աղքատ են դառնում»,- ասաց Վիկտոր Դալլաքեանը՝ հարստանալու մոլուցքով տառապողներին յիշեցնելով հռոմէացի փիլիսոփայ Սենեկայի հետեւեալ խօսքերը՝ «Անգամ եթէ կուտակես նոյնքան, որքան բազմաթիւ հարուստները, անգամ եթէ ճակատագիրը բազմապատկի քո գանձարանը առանձին մարդու համար սահմանուած չափից շատ աւելի, անգամ եթէ լողացնի քեզ ոսկու մէջ, ծիրանի զգեստ հագցնի, պարգեւի նոյնքան հաճոյքներ ու հարստութիւններ, որ հողը մարմարով պատես ու կարողանաս ոչ միայն տիրել քո բարիքին, այլեւ ոտքի տակ տալ այն՝ աւելորդութիւնները միայն կը սովորեցնեն քեզ էլ աւելին տենչալ: Ուստի հեռու մնայ ամենայն ունայնութիւնից»:



Պատգամաւոր Վիկտոր Դալլաքեան

ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի վերջերս անցկացրած ուսումնասիրութիւնները մէկ անգամ եւս վկայում են, որ Հայաստանում տիրում է համատարած աղքատութիւն:

## ԾԱՌՈՒԿԵԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ՄԻԱՅՆԱԿ ԳՆԱԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը խորհրդարանական ընտրութիւններին միայնակ է մասնակցելու: Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանին Ազգային ժողովում փոխանցեց կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանը՝ չհերքելով հնարաւորութիւնը, թէ ԲՀԿ-ն նախագահական ընտրութիւններում կարող է նաեւ իր սեփական թեկնածուն առաջադրել:

Դեռ այս տարուայ Փետրուարին Ծառուկեանի մամլոյ խօսնակ Խաչիկ Գալստեանը չէր բացառել, որ 2012-ի խորհրդարանական ընտրութիւններում կոալիցիոն 3 կուսակցութիւնները կարող են մասնակցել միասնական ցուցակով: «Միասնական ճակատը կարող է ենթադրել եւ միասնական ցուցակներ, կարող ենթադրել եւ որ իւրաքանչիւր կուսակցութիւն կարող է իր համար պայքարել, որից յետոյ այդ ձայները կը հաւաքուեն, եւ արդիւնքում կոալիցիան աւելի պատկառելի ներկայացուածութիւն կ՛ունենայ Ազգային ժողովում», - ասել էր Ծառուկեանի մամլոյ խօսնակը:

Այսօր, սակայն, ԲՀԿ-ի ղեկավարը խօսում է ընտրութիւններում իր կուսակցութեան առանձին մասնակցութեան մասին:

«Իհարկէ, մենակ ենք գնալու, ինչի՞ մասին է խօսքը, դա արդէն ասել ենք: Հզօր ուժերը... Եթէ մենք երկրորդ ուժն ենք, փոքրերը պէտք է միանան մեծերին», - ասաց Ծառուկեանը՝ յաւելելով, թէ կոալիցիոն յուշագիրը նորացրել է, որ «երկրի նախագահն իրեն հզօր զգայ»:

Հարցին, թէ միգո՞ւցէ նախագահական ընտրութիւնների էլ գնա, Ծառուկեանը բարձրաձայն ծիծաղելով, կէսկատակ պատասխանեց. - «Մնացածը՝ միւս դասին»:

## ՀՅԴ-ԱԿԱՆՆԵՐԸ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ ԵՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

Հայ ազգային կոնգրէսի մաս կազմող ՀՀՇ անդամ Կարէն Կարապետեանը ոչ հերքում, ոչ էլ հաստատում է տեղեկութիւնն այն մասին, ըստ որի՝ ՀՀՇ-ից հեռացած նախկին կուսակցականները պատրաստւում են առաջիկայում նոր քաղաքական ուժ գրանցել՝ «Ազատ ժողովրդավարներ» անունով: Ըստ այդմ, այդ քաղաքական ուժի մէջ ներգրաւուելու են բոլոր այն ՀՀՇ-ականները, ովքեր ինչ-ինչ պատճառներով նեղացել են կուսակցութիւնից թէեւ շարունակում են կուսակցական լինել, սակայն կուսակցութիւն ոտք չեն դնում: Նոր ուժի ձեւաւորման աշխատանքներն, ըստ մամուլի հրապարակումների, ստանձնել է ՀՀՇ նախկին փոխնախագահ Խաչատուր Քոքոբէլեանը:

«Առաջիկայ օրերին ամէն ինչ կը յստակեցուի եւ եթէ նման ուժ է ի յայտ գալու, ապա դրա ձեւաւորումը չի կարող գաղտնի պահուել: Այս պահին ես ոչ մի բան էլ չեմ կարող ասել»,-NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց ՀՀՇ անդամ Կարէն Կարապետեանը, ով ՀՀՇ վերջին համագումարից յետոյ հրաժարական տուեց ՀՀՇ լրատուական ծառայութեան պետի եւ ՀՀՇ երիտթեւի նախագահի պաշտօնից: Կարապետեանը թէեւ պաշտօնապէս դուրս չի եկել ՀՀՇ-ից, սակայն կուսակցութեան աշխատանքներին չի մասնակցում:

NEWS.am-ը փորձեց նաեւ նշուած տեղեկութեան վերաբերեալ մեկնաբանութիւն ստանալ նաեւ Խաչատուր Քոքոբէլեանից, սակայն նրա հետ կապուել չյաջողուեց: Նա ՀՀՇ-ից դուրս գալուց յետոյ անհասանելի է դարձել լրագրողների համար: Քոքոբէլեանը, յիշեցնենք, մօտ մէկ տարի առաջ հրաժարական տուեց ՀՀՇ փոխնախագահի պաշտօնից: Նա եւ ՀՀՇ վարչութեան նախկին նախագահ Արարատ Զուրաբեանը, ըստ լուրերի, գաղտնի բանակցութիւնների մէջ էին իշխանութիւնների հետ եւ քննարկում էին ՀԱԿ-ից դուրս գալու դիմաց յաջորդ խորհրդարանում մանդատներ ստանալու հարցը:

Հարկ է նշել, որ Ապրիլի 28-29-ին Հայաստանում գտնուող ԱՄՆ փոխպետքարտուղարի՝Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով տեղակալ Թինա Քեյդենաուն, ըստ մամուլի հրապարակումների, հանդիպել էր ՀՀՇ վարչութեան նախկին փոխնախագահ Խաչատուր Քոքոբէլեանին եւ ՀՀ նախկին արտգործնախարար, ՀՀՇ վարչութեան նախկին ղեկավար Ալեքսանդր Արզումանեանին: Հանդիպումը տեղի էր ունեցել «Պանդոկ Երեւան» ռեստորանում եւ ձգուել էր շուրջ երկու ժամ:

## ԵՐԵՔ ՏԱՐՈՒԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ 2.4 ՏՈԿՈՍԸ

Կառավարութիւնը «արտառոց» չի համարում արտագաղթի գրանցուած ցուցանիշերը:

Տարածքային կառավարման նախարարութեան միգրացիոն ծառայութեան պետ Գագիկ Եգանեանի հրապարակած տուեալների համաձայն, 2008 թուականին Հայաստանից միգրացիայի բացասական մնացորդը կծգմել է 23 հազար մարդ, 2009-ին երկրից հեռացել եւ չեն վերադարձել մօտ 25 հազար, իսկ 2010-ին՝ 29 հազար 8 հարիւրը:

Ըստ այդմ՝ Միգրացիոն ծառայութեան պետը ուռճացուած է համարում լրատուամիջոցներով տարածուած այն տեղեկատուութիւնը, թէ միայն 2010 թուականին Հայաստանից հեռացել է 70 հազար մարդ:

«Այսինքն՝ միգրացիոն տեսանկիւնից ո՛չ 2009-ին, ո՛չ 2010-ին արտառոց երեւոյթներ տեղի չեն ունենում», - Մայիս 24-ին հրաւիրած ասուլիսում յայտարարեց Գագիկ Եգանեանը:

Թէեւ նոյնիսկ պաշտօնական տուեալներով միայն վերջին 3 տարիներին Հայաստանից հեռացել է շուրջ 78 հազար մարդ, Գագիկ Եգանեանի մեկնաբանութեամբ, այս թիւը՝ միգրացիայի բացասական մնացորդը, պէտք չէ դիտարկել իբրեւ միգրացիա:

«Ուղեւորահոսքը չմեկնաբանենք որպէս միգրացիա: Սա, անշուշտ, կապ ունի միգրացիայի հետ, բայց սա միգրացիա չէ, սա ուղեւորահոսք է», - պարզաբանեց Միգրացիոն ծառայութեան պետը՝ ընդգծելով, որ վերջին տարիներին միգրացիայի բացասական մնացորդը «չի ահագնացել», այլ մնացել է «նոյն մակարդակի վրայ»:

2008-2010 թուականներին Հայաստանից հեռացել է շուրջ 78,000 մարդ

Թէ իրականում ըստ պաշտօնական տուեալների որքա՞ն է կազմում արտագաղթը, Գագիկ Եգանեանը խոստացաւ տեղեկացնել առաջիկայում:

# ԼՈՒՐԵՐ

## ICG. «ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԸ ՋԱՒԱԽՔՈՒՄ ԿԱՅՈՒՆԱՑՆՈՂ ԴԵՐ Է ԿԱՏԱՐՈՒՄ»



Ախալցխա, Վրաստանի Սամցխէ-Ջաւախքնահանգի վարչական կենտրոն

«Աղքատութիւնն ու պետական լեզուի վատ իմացութիւնը՝ ահա այն երկու հիմնական պատճառները, որ ստիպում են ջաւախահայերին լքել իրենց հայրենիքը՝ տեղափոխուելով Հայաստան կամ Ռուսաստան»: Այս մասին ասուած է Միջազգային ճգնաժամային խմբի (ICG) Մայիս 23-ին հրապարակած զեկոյցում:

«Առաւելապէս հայերով բնակեցուած Ջաւախքի տարածաշրջանը 1991-ին Վրաստանի անկախացումից ի վեր հաւանական պայթիւնավտանգ տարածաշրջանների թուին էր պատկանում: Շրջանը գտնւում էր կիսառազմականացուած խմբաւորումների փաստացի հսկողութեան ներքոյ, եւ կապը պետութեան մնացած հատուածների հետ շատ թոյլ էր», - ներկայացնելով 90-ականների իրավիճակը՝ նշում են ճգնաժամային խմբի փորձագէտները:

«2008-ի ռուս-վրացական պատերազմից յետոյ շատ օտարերկրացի վերլուծաբաններ, մատնանշելով 2005 եւ 2006 թուականներին բռնութիւններով ուղեկցուած ցոյցերը, կանխատեսում էին, թէ Ջաւախքը յաջորդ տարածաշրջանն է դառնալու, որը հանդէս կը գայ առնուազն ինքնավարութիւն տրամադրելու պահանջով: Վրացական իշխանութիւնները, սակայն, վերջին շրջանում կարողացան մի շարք յաջողուած քայլեր իրականցնել՝ մասնաւորապէս ամրապնդելով կապերը Վրաստանի այլ շրջանների հետ: Բացի այդ դադարեցուեցին այն ծրագրերը, որոնք ընկալւում էին որպէս խտրականութեան տարրեր պարունակող, նուազեցուեց դեռեւս գործող արմատական խմբերի ազդեցութիւնը: Վրաստանի իշխանութիւնները պէտք է շարունակեն այս գործելաոճը՝ որպէսզի Ջաւախքի 95 հազարանոց, առաւելապէս հայալեզու բնակչութիւնը իրեն լիակատար կերպով ինտեգրուած զգայ Վրաստանի պետութեանը», - նշում են զեկոյցի հեղինակները:

«Ջաւախքի բազմաթիւ բնակիչներ իրենց Վրաստանի լիիրաւ քաղաքացիներ չեն զգում, ուստի գերադասում են մասնակցել հարեւան Հայաստանի քաղաքական ու մշակութային կեանքին: Հայաստանում գործող ազգայնական խմբաւորումներն էլ փութաջանօրէն սկսում են նրանց համոզել, որ իրենք վրացական կառավարութեան խտրական քաղաքականութեան զոհերն են: Որպէս նման քաղաքականութեան ապացոյց մատնանշւում են Ջաւախքում առկայ աղքատութիւնն ու գործազրկութիւնը, ինչպէս նաեւ հայերէնը որպէս տարածաշրջանային լեզու ճանաչող օրէնքի բացակայութիւնը: Այդուհանդերձ, նման պայմաններում Երեւանի ներկայիս ղեկավարութիւնը կայունացնող դեր ունի եւ կարողանում է թուլացնել Ջաւախքում առկայ լարուածութիւնը՝ Հայաստանի տարածքում ձերբակալելով ջաւախքցի արմատականներին», - նշում են Միջազգային ճգնաժամային խմբի մասնագէտները՝ մի շարք կոնկրետ խորհուրդներ ուղղելով Վրաստանի իշխանութիւններին:

Մասնաւորապէս, Միջազգային ճգնաժամային Խումբը պաշտօնական Թբիլիսիին կոչ է անում մեծացնել հայոց լեզուի դերը՝ վաւերացնելով տարածաշրջանային եւ ազգային փոքրամասնութիւնների լեզուների մասին եւրոպական խարտիան: Բացի այդ, զեկոյցի հեղինակները նշում են, որ հարկաւոր է խթանել մասնաւոր ներդրումների հոսքը, բարելաւել տարածաշրջանային հեռուստաընկերութիւնների աշխատանքը՝ համապետական ալիքների հաղորդումները թարգմանելով հայերէն:

«Հայաստանում գործող ազգայնական խմբաւումներն ու լրատուամիջոցները պէտք է աներկբայօրէն ընդունեն, որ Ջաւախքի հայերը Վրաստանի քաղաքացիներ են եւ զերծ մնան նուրբ խնդիրների քաղաքականացումից», -նշուած է ICG-ի հրապարակած զեկոյցում:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է «ՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ» ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՇՓՄԱՆ ԳԾՈՒՄ

Հայաստանի Պաշտպանութեան նախարարի մամլոյ խօսնակ Դաւիթ Կարապետեանը հաստատում է, որ օրերս Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինուած ուժերի շփման գծում ադրբեջանցի զինծառայողները զոհուել են հայկական կողմի պատասխան գործողութիւնների հետեւանքով:

«Դա տեղի է ունեցել մեր կողմից պատասխան գործողութիւնների, նաեւ ադրբեջանցի դիպուկահարներին պատժելու, ոչնչացնելու գործողութիւնների արդիւնքում», - ասաց Դաւիթ Կարապետեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում:

Ադրբեջանի պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութիւնն աւելի վաղ հաղորդել էր, որ անցած Ուրբաթ եւ Կիրակի օրերին Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի զինուած ուժերի շփման գծում զոհուել են ադրբեջանցի զինծառայողներ Ֆարիդ Ֆարաջեւը եւ Ռահման Մամեդովը:

Անցած շաբաթ, անդրադառնալով Ադրբեջանի կողմից դիպուկահար գործողութիւնների ակտիւացմանը, որի արդիւնքում հայ զինծառայողներ ու խաղաղ բնակիչներ են զոհւում, Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը, մասնաւորապէս, ասել էր. - «Դիպուկահարների գործողութիւններին լիարժէք պատասխան է տրւում: Այդ գործողութիւններին պատասխան է տրւում անհամաչափ պատժի կիրառմամբ: Դա նշանակում է, որ նրանք պատժւում են մի քանի անգամ աւելի մեծ կորուստներով, այլ բան է, որ ադրբեջանական զանգուածային լրատուամիջոցները իրենց հանրութեանը դա ներկայացնում են, այսպէս ասած, իրենց ձեւով»:

Հարցին, թէ կարելի՞ է ենթադրել, որ տեղի ունեցածը տեղաւորւում է նախարարի յայտարարութեան համատեքստում, Կարապետեանը պատասխանեց. - «Վերջին օրերին ադրբեջանական կողմը ակտիւացրել է իր ռազմական գործողութիւնները շփման գծում, որի արդիւնքում 100-աւոր անկանոն եւ դիպուկահարային կրակ է արձակուել հայկական կողմի ուղղութեամբ: Հայկական կողմը պատասխան գործողութիւններով լռեցրել է այդ կրակակէտերը, որի արդիւնքում ադրբեջանական կողմից մարդկային կորուստների մասին ադրբեջանական լրատուամիջոցները յայտարարում, իսկ յաճախ նաեւ չեն յայտարարում: Հայկական կողմից տուժածներ չկան, իսկ ադրբեջանական կողմի տուժածների համար պատասխանատուութիւնը ամբողջութեամբ ընկնում է ադրբեջանական կողմի վրայ»:

## ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՓՈՍՏԸ ՎԻԷՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 200-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԴՐՈՇՄԱՆԻՇ Է ԹՈՂԱՐԿԵԼ

Վիէննայի Մխիթարեան միաբանութեան 200-ամեայ յոբելեանի կապակցութեամբ Աւստրիայի փոստը թողարկել է «200 տարի - Մխիթարեանները Վիէննայում, 1811-2011» դրոշմանիշը՝ 1 միլիոն տպաքանակով:




Օրերս միաբանութիւնում կայացել է դրոշմանիշի շնորհանդէսը, որին, Հայաստանի արտգործնախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ, ներկայ են եղել Հայաստանի դեսպան Աշոտ Յովակիմեանը, Հայաստանում Աւստրիայի դեսպան Միխայէլ Փոսթլը, Կենտրոնական Եւրոպայի հայրապետական պատուիրակ Հայկազուն ծայրագոյն վարդապետ Նաջարեանը, Աւստրիայում առաքելական նուիրակ, արքեպիսկոպոս Պետեր Շտեֆան Եուրբրիգենը, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Միջոցառման ընթացքում Մխիթարեան միաբանութեան աբբահայր Պօղոս Գոճանեանը ներկայացրել է Վիէննայում միաբանութեան հիմնումը, միաբանութեան պատմութիւնը եւ 200-ամեայ ուղին:

## ՀԱՅԵՐՆ ՈՒ ՅՈՅՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ «ՎԱՏ ՀԱՐԵՒԱՆ» ԵՆ ԱՆՈՒԱՆԵԼ

Հայերն ու յոյները Թուրքիային վատ հարեւան են համարում: Նման արդիւնքներ են ստացուել հարեւան երկրների վրայ Թուրքիայի արտաքին քաղաքականութեան ազդեցութեան վերաբերեալ հետազօտութեան արդիւնքում: Հետազօտութիւնն իրականացրել է Ստամբուլի Ֆաթըհ համալսարանը:

Թուրքիային առաջին տեղում նշել են սիրիացիներն ու բուլղարները: Այդ երկրների բնակչութեան 60 տոկոսը կարծում է, որ Թուրքիան հաւասարակշիռ քաղաքականութիւն է վարում, իսկ Հայաստանն ու Յունաստանը Թուրքիային վատ հարեւան են համարում:

Հետազօտութեան արդիւնքներով, հարցուածների 27 տոկոսը Թուրքիային համարում են տարածաշրջանային նոր ուժ, 13 տոկոսը՝ Իրանին, նոյնքան էլ՝ Ռուսաստանին: Յունաստանը, թէեւ վատ հարեւան է համարում Թուրքիային, նրան տարածաշրջանային տէրութիւն է դիտարկում:

www.massisweekly.com

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Շարունակուած էջ 1-էն

ցին բազմաթիւ ելոյթներ՝ հանդուրժողականութեան, քաղաքական խաղաղ համակեցութեան մասին, թէեւ ոեւէ մէկը չյիշատակեց ո՛չ ՀԱԿ-ը, ո՛չ ալ քաղաքական բանտարկեալները ազատ արձակելու պահանջը:

«Մենք պիտի կարողանանք ի վերջոյ հիմք դնել քաղաքական քաղաքակիրթ երկխօսութեան մշակոյթին», - իր ելոյթին մէջ ըսաւ Խորհրդարանի նախագահ Յովիկ Աբրահամեան ու աւելցուց - «Մենք կարեւորում եւ ողջունում ենք այն, ինչը վստահօրէն կարելի է ասել՝ միտուած է մեղմելու երկրում կուտակուած լարուածութիւնը եւ խթանելու հանդուրժողականութեան, համերաշխութեան եւ միասնականութեան մթնոլորտի ձեւաւորումը»:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՍՐԱՅԵԼԻ ՋԵՐՄԱՑՈՒՄԸ ԲԱՑԱՏՐՈՒՈՒՄ Է ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԱՌԵՑՄԱՄԲ

«Կարծում եմ՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը Իսրայէլի պարտականութիւնն է»,- NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտարարեց Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը Կնեսեթի կրթութեան եւ մշակոյթի յանձնաժողովում ներկայացրած «Մերեց» ձախ կուսակցութեան անդամ Զաավա Գալիոնը:



Իսրայէլի Կնեսեթի անդամ Զաավա Գալիոն

Կնեսեթի անդամը նշեց, որ քննարկումները բաց են լինելու:

«Վերջին տարիներին Կնեսեթը Հայոց ցեղասպանութեան հարցի վեաբերեալ քննարկումների որոշում էր կայացնում, որոնք պէտք է կայանային արտաքին եւ անվտանգութեան հարցերով յանձնաժողովում: Այս տարի քննարկումները կ՚ընթանան կրթութեան եւ մշակոյթի բաց յանձնաժողովում: Սա շատ կարեւոր է»,- ընդգծեց Գալիոնը՝ աւելացնելով, որ քննարկումներին շատ մարդ է հրաւիրուելու:

Խօսելով այն մասին, թէ ինչո՞ւ է յատկապէս այժմ Կնեսեթը այս հարցի առնչութեամբ քննարկումներ ծաւալում, իսրայէլցի խորհրդարանականը նշեց, որ «Մերեց» կուսակցութիւնն ամէն տարի բարձրացնում է այս հարցը: «Սակայն այս տարի կարող եմ ենթադրել, որ որոշումն ընդունուեց Թրքական կառավարութեան հետ ունեցած խնդիրների հետեւանքով»,- ասաց Զաավա Գալիոնը:

Կնեսեթի անդամը յոյս յայտնեց, որ Իսրայէլը կը ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը եւ դա նոր էջ կը բացի երկու երկրների յարաբերութիւնների միջեւ: «Հայոց ցեղասպանութեան ճանաչումը մեր բարոյական պարտքն է, սակայն դժուար է ասել՝ ինչ կարող է լինել»,- ամփոփեց պատգամաւորը:

Նշենք, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը Կնեսետի կրթութեան եւ մշակոյթի յանձնաժողով էր ներկայացրել ձախ ուղղուածութեան «Մերեց» կուսակցութիւնը, որին աջակցել է Իսրայէլի վարչապետ Նեթանիահուի գլխաւորած «Լիկուդ» կուսակցութիւնը: Հայոց ցեղասպանութեան ճանաչումը քննարկելու պահանջը խորհրդարանական յանձնաժողովում հաւանութեան է արժանացել ձայների մեծամասնութեամբ: Մինչ կրթութեան յանձնաժողով ուղարկելը, Կնեսեթի նիստում բոլոր մասնակիցները, այդ թւում Կնեսեթի նախագահը, պաշտպանել են քննարկումները շարունակելու որոշումը, ընդգծելով, որ Թուրքիայի հետ Իսրայէլի յարաբերութիւնները չպէտք է Հայոց ցեղասպանութիւնը չճանաչելու պատճառ դառնան:

## ՊՈՒԼԿԱՐԱՑԻ ԿՈՒՍԱԿՑԱՊԵՏԸ ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ ՀԱՐՈՒԱԾԵԼ Է ԹՈՒՐՔ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԻՆ

Պուլկարիայում հակաթրքական եւ ազգայնական հայեացքներով աչքի ընկնող ATAKA կուսակցութեան առաջնորդ Վոլան Սիդերովն ուղիղ եթերում հայհոյել եւ հարուածել է Պուլկարիայի խորհրդարանի ազգութեամբ թուրք պատգամաւոր Քուրման Իսմաիլովին: Այս մասին գրում է թրքական «Վաթան» օրաթերթը:



ATAKA կուսակցութեան առաջնորդ Վոլան Սիդերով

Թրքական լրատուամիջոցի փոխանցմամբ՝ դէպքը տեղի է ունեցել Պուլկարիայի պետական հեռուստատեսութեամբ հեռարձակուող Nedelya 150 հեռուստահաղորդման ընթացքում, որի ժամանակ կողմերը վիճաբանել են օրեր առաջ Սոֆիայի մզկիթներից մէկի մօտ պուլկարացի ազգայնականների եւ թուրքերի միջեւ տեղի ունեցած բախման առնչութեամբ:

Վոլան Սիդերովն ասել է, որ յարձակման համար պատասխանատուութիւն են կրում թուրքերը, որոնք զինուած են եղել դանակներով: Իսկ թուրք պատգամաւորը պնդել է հակառակը՝ ողջ պատասխանատուութիւնը բարդելով ATAKA կուսակցութեան կողմնակիցների վրայ:

Քուրման Իսմաիլովի այդ խօսքերը բարկացրել են ATAKA-ի առաջնորդ Սիդերովին, որը նախ հայհոյել, ապա բռունցքներով յարձակուել է թուրք պատգամաւորի վրայ: Հաղորդավարը ստիպուած է եղել դադարեցնել եթերը:

Յիշեցնենք, որ օրեր առաջ Սոֆիայում բախում էր տեղի ունեցել ATAKA կուսակցութեան համակիրների եւ նամազ անող թուրքերի միջեւ, եւ այդ հետեւանքով վիրաւորուել էր 10 եւ ձերբակալուել 4 մարդ:

Թրքական կողմը պնդում է, թէ ATAKA կուսակցութեան համակիրները յանկարծակի յարձակուել են նամազ անող թուրքերի վրայ: Իսկ ATAKA-ի առաջնորդ Վոլան Սիդերովը վստահեցնում է, որ թուրքերն են յարձակուել իրենց վրայ:

Նշենք, որ ATAKA կուսակցութիւնը Պուլկարիայի խորհրդարանում պարբերաբար բարձրացնում է Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը:

## ԴԱՐՁԵԱԼ ՌՈՒՄԲԻ ԿԵՂԾ ԱՀԱԶԱՆԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԵՐԵՒԱՆ-ԱՄՍԹԵՐՏԱՄ ՕԴԱՆԱՒԻ ՄԷՋ ՌՈՒՄԲ ՉԿԱՐ

22 Մայիսի առաւօտեան ժամը 7:00ին «Զուարթնոց» օդակայանի մէջ ահազանգ հնչեց այն մասին թէ Երեւան-Ամսթերտամ թռիչքի օդանաւին մէջ ռումբ մը կայ: Օդանաւը կը պատկանէր «Արմաւիա» ընկերութեան եւ էրպաս-320 վաճառանիշն ունէր:

Ահազանգէն անմիջապէս վերջ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) աշխատակիցներն ու Արտակարգ Իրավիճակի Նախարարութեան աշխատակիցները օդակայան փութացին: Հոն հաւաքուած քաղաքացիներու զրոյցէն յայտնի դարձաւ որ առաւօտուն Մոսկուա պէտք է մեկնէր ԱԱԾ-ի տնօրէն, զօրավար Գորիկ Յակոբեան եւ հաւաքուածներ կէս կատակ կէս լուրջ կը նշէին որ տնօրէնի մեկնումէն առաջ անձ մը չար կատակ մը ըրած է:

Ժամբորդները անմիջապէս փոխադրուեցան այլ օդանաւ մը, իսկ օդանաւը մանրակրկիտ զննումներու ենթարկուեցաւ:Ականազերծողներն ու ԱԱԾ-ի աշխատակիցները յատուկ շուներով ստուգեցին օդակայանի ամբողջ տարածքը, բարեբախտաբար ռումբ չյայտնաբերուեցաւ: Վերջնական եզրակացութիւնը հետեւեալն է, ահազանգը կեղծ էր:

## ՍՏՐՈՍՍ ՀԱՆԸ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՈՒ ՓԱՐԻԶԻ ՍԱԴՐԱՆՔԻ ԶՈՀ Է. ԿԼՈԴ ԲԱՐՏՈԼՈՆ

Ֆրանսայի Սոցիալիստական կուսակցութեան ներկայացուցիչ Կլոդ Բարտոլոնը յայտարարել է, որ Արժոյթի միջազգային հիմնադրամի նախկին ղեկավար Դոմինիկ Ստրոսս Հանը դեռեւս մէկ ամիս առաջ կասկած է յայտնել, որ Ռուսաստանի ու Ֆրանսայի իշխանութիւններն իր դէմ դաւադրութիւն են կազմակերպում:



Դոմինիկ Ստրոսս Հան

«Նա ինձ այդ մասին ասել է, երբ մենք Ապրիլի 29-ին Փարիզում խօսել ենք հեռախօսով»,-ասել է Բարտոլոնը:

Նա աւելացրել է, որ Ստրոսս Հանն իրեն ասել է, թէ Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինը պաշտօնական Փարիզի հետ պայմանաւորուածութիւն է ձեռք բերել այնպիսի իրավիճակ ստեղծել, որպէսզի նա հրաժարուի Արժոյթի միջազգային հիմնադրամի նախագահի պաշտօնից: Ստրոսս Հանը նաեւ ասել է, որ եթէ հիմնադրամից իր հեռանալը զուգորդուի կեղտոտ սադրանքներով, նա չի կարողանայ առաջադրել իր թեկնածութիւնը Ֆրանսայում 2012-ին կայանալիք նախագահական ընտրութիւններին»:

Յիշեցնենք, որ Արժոյթի միջազգային հիմնադրամի ղեկավար Դոմինիկ Ստրոսս Հանը ձերբակալուել է ընթացիկ տարուայ Մայիսի 14-ին Նիւ Եորքի՝ Քենետի անուան օդակայանում: Նա ձերբակալուել էր այն բանից յետոյ, երբ Sofitel հիւրանոցի սպասուհիներից մէկը ոստիկանութեանը յայտնել էր, որ Ստրոսս Հանը փորձել է իրեն բռնաբարել: Վերջինիս նկատմամբ սեռական բնոյթի բռնի գործողութիւններ կատարելու եւ մարդու ազատութիւնն ապօրինի կերպով սահմանափակելու մեղադրանք է առաջադրուել:

Դոմինիկ Ստրոսս Հանը համարւում էր 2012-ին Ֆրանսայում կայանալիք նախագահական ընտրութիւններին Սոցիալիստական կուսակցութեան հաւանական թեկնածուն ու ներկայիս նախագահ Նիկոլա Սարկոզիի մրցակիցը:

## ԻՆԹԸՐՆԵԹԻ ՎՐԱՅ Ի ՅԱՅՏ ԵԿԱՆ

Շարունակուած էջ 1-էն

պէտք է «լրջօրէն ուսումնասիրի այդ տեսանիւթը եւ փորձի գտնել կրակողներին»: Անդրանիկ Քոչարեան տեղեկացուց, որ նախկին Փաստահաւաք խումբը ժամանակին ուսումնասիրած է այս տեսարանները:

«Այնտեղ մի բան է երեւում, որ ոստիկանութեան աշխատակիցը կամ աշխատակիցները իրենց տրամադրութեան տակ եղած ատրճանակներով նշանառու կրակոցներ են արձակում: Կադրերում մենք տեսնում ենք ատրճանակը սպայի ձեռքում, որը ուղիղ, նշանառու կրակոցներ է արձակում: Թող բարի լինեն, պարզեն, թէ ատրճանակից կրակող սպան ով է եւ ինչի համար կրակում ցուցարարների ուղղութեամբ», - ըսաւ Քոչարեան՝ շեշտելով, որ եթէ սպան վախցնելու համար կը կրակէր, ապա պէտք է օդը կրակէր, իսկ հորիզոնական դիրքով կրակելու պարագային գնդակը կրնայ դպչիլ պատահական ռեւէ մարդու:

Մայիս 25-ին հրաւիրուած մամլոյ ասուլիսի մը ընթացքին Յատուկ Քննչական Ծառայութեան խումբի ղեկավար Վահագն Յարութիւնեան յայտարարեց, որ այժմ կը հետազօտուին Ինթըրնեթի վրայ յայտնուած տեսարանները:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ՝ ԴԱՐՁԵԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԱՐԿՄԱՆ ԾԻՐՈՒՄ

**ՍԱՐՕ ՍԱՐՈՅԵԱՆ**

*Իսրայէլի խորհրդարանում՝ Կնեսեթում, քննարկւում է Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը: Կնեսեթի կրթութեան եւ մշակոյթի յանձնաժողովին այս օրերին յանձնարարուել է այդ կապակցութեամբ որոշման նախագիծ պատրաստել եւ ներկայացնել խորհրդարանի հաստատմանը: Այս քայլով Իսրայէլը փորձում է Թուրքիային ետ պահել հակաիսրայէլական նոր քայլեր ձեռնարկելու մտադրութիւնից:*

*Պաշտօնական Անքարայի եւ Թել Աւիւի փոխյարաբերութիւնները կտրուկ սրուեցին անցեալ տարուայ Մայիսի 31-ին տեղի ունեցած դէպքերի կապակցութեամբ, երբ Իսրայէլի զինուած ուժերը ռազմական գործողութիւն իրականացրին՝ կանգնեցնելու համար Գազայի շրջափակումը ճեղքելու եւ նրան հումանիտար օգնութիւն հասցնելու նկատառումով ծով մտած «Ազատութեան նաւատորմիղը»: Զոհուեցին տասնեակ մարդիկ, այդ թւում՝ Թուրքիայի քաղաքացիներ: Այնուհետ փոխադարձ կոշտ հռետորաբանութիւնն ու պաշտօնական մեղադրանքները միջազգային հանրութեանը ցոյց տուեցին, որ երբեմնի գործընկերներ ու դաշնակիցներ հանդիսացող այդ երկու երկրների շահերը տեւական բախման փուլ են մտել եւ Անքարային ու Թել Աւիւին հետզհետէ կարող են մղել քաղաքական լրջագոյն առճակատման:*

*Թուրքիայի եւ Իսրայէլի յարաբերութիւններում լարուածութեան ի յայտ գալը կապուած է Անքարայի մերձաւորարեւելեան նոր քաղաքականութեան հետ, որը գործնականում կեանքի կոչուեց հենց թուրք-իսրայէլական յարաբերութիւնների համատեքստում: 2009թ. Յունուար ամսին Դաւոսում Թուրքիայի վարչապետ Էրդողանի եւ Իսրայէլի նախագահ Պերեսի միջեւ պաղեստինցիների նկատմամբ Իսրայէլի ձեռնարկած ռազմական գործողութիւնների փաստով ծագած տհաճ միջադէպը դարձաւ երկու երկրների յարաբերութիւնների վատթարացման պատճառ: Վերադառնալով Անքարա՝ Էրտողանը յայտարարեց Թուրքիայի արտաքին քաղաքականութեան նոր շրջանի եւ այն մասին, որ «աշխարհը տեսաւ Թուրքիայի հզօրութիւնը»:*

*Արտաքին քաղաքականութեան հայեցակարգում Թուրքիայի իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան ստանձնած նոր քաղաքական ուղեգիծը ենթադրում է անմիջական հարեւանների ու յատկապէս արաբական աշխարհի, Իրանի ու Ռուսաստանի հետ բարիդրացիական յարաբերութիւնների հաստատում եւ նախորդ շրջանից ժառանգած խնդիրների չէզոքացում: Նման ռազմավարութեան որդեգրումը նպատակ ունի նպաստել Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կշռի անհամեմատ բարձրացմանն ամբողջ աշխարհում, որը միւս տէրութիւններին կը ստիպի համաշխարհային քաղաքականութեան մէջ թրքական գործօնի հետ հաշուի նստել առանց վերապահումների ու պայմանականութիւնների:*

*Ինչպէս եւ կարելի էր սպասել, Իրանի, Սիրիայի, «Համաս» խմբաւորման եւ, ընդհանրապէս, արաբական աշխարհի հետ Թուրքիայի սկզբունքային նման գործակցութիւնն անմիջապէս բախուելու էր Իսրայէլի տարածաշրջանային շահերին՝ դառնալով երկու պետութիւնների քաղաքական յարաբերութիւնների վատթարացման աղբիւր: Սակայն, ինչպէս ցոյց տուեցին յետագայ իրադարձութիւնները, թրքական պետական մեքենայի համար իսրայէլական շահերին հակադրուելը ոչ թէ նոր ռազմավարութիւնից ծագող մարտահրաւէր էր, որը հարկ էր մեղմել կամ չէզոքացնել, այլ արտաքին քաղաքականութեան կարեւոր նպատակակէտ: Թիրախ ընտրելով Իսրայէլին ու նրա հետ մտնելով կոշտ պայքարի մէջ՝ Թուրքիան լուծում էր իսլամական աշխարհի գաղափարական առաջամարտիկը լինելու եւ նրա քաղաքական շահերը սպասարկելու խնդիր: Այդ գործում պաղեստինցիների իրաւունքների պաշտպանութեան խնդիրն այդուհետ ձեռք էր բերում առանցքային դերակատարութիւն: Իսրայէլի հետ մտնելով հակադրութիւնների տեւական փուլ՝ Թուրքիան պէտք է համոզեր ողջ միջազգային հանրութեանը եւ, յատկապէս, արաբական աշխարհին, որ այլեւս աւարտուած է Անքարայի՝ Արեւմուտքի կցորդի կարգավիճակի դարաշրջանը:*

*2009թ. Դաւոսում թուրք-իսրայէլական յարաբերութիւններում արձանագրուած առաջին խոշոր ճաքերը շատ վերլուծաբաններ ու փորձագէտներ փորձեցին տեսնել երկու դաշնակիցների ժամանակաւոր մարտավարական հակասութիւնների տիրոյթում: Սակայն նոյն թուականի Հոկտեմբեր ամսին «Անատոլիական արծիւ» զինավարժութիւններում Թուրքիայի կողմից Իսրայէլի մասնակցութեան արգելափակումը (ըստ թրքական լրատուամիջոցների՝ Անքարայի նման քայլի պատճառը իսրայէլական օդանաւերի հնարաւոր մասնակցութիւնն էր Գազայում պաղեստինցիների ռմբակոծումներին) կրկին ճգնաժամի առջեւ կանգնեցրեց երկու երկրներին: Իսկ արդէն 2010թ. Մայիսի 31-ին «Ազատութեան նաւատորմիղի» գրաւման եւ դրան հետեւած իրադարձութիւնները վկայեցին, թէ որքան են Թուրքիայի նոր ռազմավարութեան որդեգրման արդիւնքում իրարից հեռացել երկու երկրների երբեմնի ընդհանրական ռազմավարական շահերը:*

*Մէկ ամիս առաջ շատ լրատուամիջոցներ սկսեցին ահազանգել Մայիս-Յունիս ամիսներին թուրք-իսրայէլական յարաբերութիւններում սպասուող նոր սուր ճգնաժամի մասին: Խնդիրն այն է, որ նախորդ տարուայ Մայիսի 31-ի դէպքերի տարելիցի առիթով ծրագրւում էր Թուրքիայի գործուն աջակցութեամբ եւս մէկ նաւատորմիղի ուղեւորութիւն դէպի Գազա: Նախնական ծրագրերի համաձայն՝ նաւատորմիղի ուղեւորութեան մեկնարկը պէտք է տրուէր Մայիսի վերջին, սակայն կազմակերպիչները յետագայում որոշեցին յետաձգել այն մինչեւ Թուրքիայում Յունիսի 12-ին կայանալիք ընտրութիւնների աւարտը:*

*Թուրքական նախապատրաստական աշխատանքներին հետեւեցին պաշտօնական Թել Աւիւի արձագանքները: Իսրայէլի վարչապետ Նեթանիահուն Ապրիլի 27-ին երկրի բարձրաստիճան պաշտօնեաների հետ խորհրդակցութիւնից յետոյ յայտարարեց, որ բանակին յանձնարարուած է շարունակել Գազայի շրջափակումը պահպանելու անհրաժեշտ նախապատրաստական միջոցառումները, իսկ դիւանագէտներին՝ ջանքեր գործադրել Թուրքիայից նաւատորմի ուղեւորութիւնը կասեցնելու նպատակով:*

*Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցի ներգրաւումը Կնեսեթի կրթութեան եւ մշակոյթի յանձնաժողովի քննարկման ոլորտ՝ վկայում է, որ հրեայ դիւանագէտների կանխարգելիչ ջանքերի հիմնական գործիքներից մէկը դիտարկւում է հենց Հայոց ցեղասպանութեան հարցը: Նախորդ տարիներին Իսրայէլի խորհրդարանում ճանաչման հարցն արդէն դրուել էր քննարկման: Սակայն նախկինում հարցն ընդգրկուել էր Կնեսեթի ոչ թէ կրթութեան եւ մշակոյթի յանձնաժողովում, այլ՝ պաշտպանութեան եւ արտաքին յարաբերութիւնների, ինչը վկայում էր, որ Իսրայէլի իշխանութիւններն այն խորհրդարանի լիագումար նիստի օրակարգ մտցնելու ցանկութիւն չունեն, քանզի տուեալ յանձնաժողովի իւրաքանչիւր որոշում ընդունւում է՝ ելնելով բացառապէս Իսրայէլի պետական շահերից ու քաղաքական նպատակահարմարութիւնից:*

*Իհարկէ, Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցի ներառումը կրթութեան եւ մշակոյթի յանձնաժողովի քննարկման տիրոյթ՝ ամենեւին էլ չի նշանակում, որ Իսրայէլն այժմ մտադրուել է հարցին վերջնական լուծում տալ: Հրեայ դիւանագէտներից մեծ ջանքեր կը պահանջուեն Ցեղասպանութեան ճանաչման մտադրութեան լրջութիւնը թուրք գործընկերներին հաւաստիացնելու համար: Սակայն Պաղեստինի շուրջ վերջին օրերին տեղի ունեցող զարգացումները, պաշտօնական Թել Աւիւի համար բաւական անբարենպաստ քաղաքական միջավայր են ստեղծել: Առանձին պետութիւնների կողմից Պաղեստինի անկախութեան ճանաչման փաստը՝ այն էլ մինչեւ 1967թ. եղած սահմաններում, միւս կողմից էլ գլխաւոր դաշնակից Օպամայի՝ օրերս արած յայտարարութիւնն առ այն, որ իսրայէլ-պաղեստինեան խնդրի լուծումը երկու առանձին պետութիւնների կազմաւորման եւ մինչեւ 1967թ. եղած սահմաններին վերադառնալու մէջ է, խոչընդոտներ են դառնում թուրք-իսրայէլական դիւանագիտական շփումներում: Մայիսի 20-ին Օպամայի եւ Նեթանիահուի միջեւ տեղի ունեցած բանակցութիւններում նոյն դիրքորոշման հետեւողական պահպանումն ԱՄՆ նախագահի կողմից առաւել խոցելի է դարձնում հրէական դիւանագիտական ջանքերը:*

*Իսրայէլը՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը դարձնելով շահարկման առարկայ, երբ ինքը խնդիր ունի պաղեստինցիների հետ, ում իրաւունքների պաշտպանութեան մասին սկսել են խօսել անգամ մերձաւոր դաշնակիցները, հնարաւոր է, շուտով կանգնի այնպիսի փաստի առջեւ, որտեղ իր գործողութիւնները կարող են ասիմետրիկ քաղաքական քայլեր դառնալ: Խնդիրն այն է, որ Թուրքիան Պաղեստինի հարցում ձեռնարկե-*

*Շար.ը էջ 7*



## ԻՆՉՈ՞Ւ Է ԱՐԱՐԱՏԸ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՎՐԱՅ

*«Լրագիր»ի աշխատակից ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆԻ զրուցակիցն է Թուրքիայում հրատարակուող «Թարաֆ» օրաթերթի թղթակից Օզգիւն Օշչերը, ով այս օրերին «Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ երկխօսութեան զարգացում» ծրագրի շրջանակներում գտնւում է Հայաստանում:*



***«Թարաֆ»-ի թղթակից Օզգիւն Օշչեր***

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Օզգիւն, Թուրքիայում խօսքի ազատութեան վիճակն ինչպէ՞ս է: Թուրքիայի ներքին գործերի նախարար Բեշիր Աթալայը վերջերս յայտարարել էր, որ Թուրքիայում մամուլի ազատութիւն աւելի շատ կայ, քան ԱՄՆում: Որպէս մամուլի աշխատակից՝ ի՞նչ կ՛ասէք այդ կապակցութեամբ:

***ՕԶԳԻՒՆ ՕՇՉԵՐ.*** *- Կարող եմ նշել երկու տարբեր մօտեցումներ: Մի կողմից, Թուրքիայում ամենաշատ վաճառուող թերթերը ժամանց են պարունակում եւ հիմնականում կառուցւում են սենսացիոն (աղմկալի-խմբ.», շոկային (ցնցիչ-խմբ.), սկանդալային (գայթակղութիւն յառաջացնող-խմբ.) լուրերի հիման վրայ, որպէսզի ընթերցողներ ապահովեն: Այս տեսակ թերթերի համար, կարծում եմ, մամուլի ազատութիւնը առաջնային խնդիրներից չէ: Միւս կողմից, մեր թերթը՝ «Թարաֆը», Թուրքիայում իր դէմ ամենաշատ դատական հայցեր ունեցող թերթերից մէկն է: Ի դէպ, ողջունելի է, երբ թերթի նկատմամբ այդքան դատական հայցեր կան: Հետաքրքիր է, որ դատական հայցերը հիմնականում սիւնակագիրների (վերլուծաբանների) գրած մտքերի դէմ են: Դրանք հիմնականում դատախազներ են, որոնց նպատակն է մեր թերթը ճնշման տակ պահել, եկամուտները նուազեցնել, այսինքն՝ տնտեսապէս ճնշել թերթը:*

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Կարելի՞ է ասել, որ «Թարաֆն» ինչ-որ առումով ապահովում է խօսքի ազատութիւն, դրա համար էլ սարսափած են:

***ՕԶԳԻՒՆ ՕՇՉԵՐ.*** *- Մեր թերթը մի շարք խնդիրների հետ կախուած բաւական զգայուն մօտեցում ունի: Օրինակ՝ քրդական խնդրի, հայկական հարցի հետ կապուած: Մեր լրագրողները շատ յաճախ արտայայտում են այնպիսի մտքեր, որոնք թուրքական կառավարութեան կողմից հաւանութեան չեն արժանանում, օրինակ, Քուրդիստանի լրագրողները քննադատում են զինուած ուժերին, զինուորականներին: Այս առումով թէեւ գրաքննութեան չեն ենթարկւում նիւթերը, բայց արդիւնքում հալածւում ես թէ՛ իրաւական, թէ՛ քաղաքական առումներով: «Ֆրիդոմ հաուսի» իրականացրած վերջին հետազօտութիւնների արդիւնքում թուրքական մամուլն ամենավերջին տեղն է զբաղեցնում: Եւ եթէ ինչ-որ մէկին ասես՝ Թուրքիայում մամուլի ազատութիւն կայ, քեզ առնուազն գիժ կը համարի:*

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Լրագրողը կարողանո՞ւմ է Թուրքիայում հասարակական կարծիք ձեւաւորել:

***ՕԶԳԻՒՆ ՕՇՉԵՐ.*** *- Լաւ հարց է: Օրինակ՝ Թուրքիայում լուրեր գրելիս «յետին միտքը» բացայայտ չենք գրում, իսկ սիւնագիրները ազատ են, կարող են գրել: Թեմաների վճռական որոշումները խմբագիրներն են կայացնում, թէ ենթադրենք ո՞ր լուրը պէտք է տեղադրուի թերթում եւ որը՝ ոչ:*

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Այնուամենայնիւ, լրագրողն էլ կախուած է խմբագրի կարծիքի՞ց:

***ՕԶԳԻՒՆ ՕՇՉԵՐ.*** *- Վերջին հաշուով՝ այո: Աւելի յայտնի լրագրողների կարծիքը արժէք ներկայացնում է, բայց ամէն դէպքում ինչ պէտք է տպագրուի՝ գլխաւոր խմբագրի վճռելիքն է:*

*Իշխանութիւնները քեմալական հասկացութեան հակառակորդներ են: Քանի որ մենք զինուորական իշխանութեան դէմ ենք գրում, այնպէս է ստացւում, որ մեր գրածը համընկնում է իշխանութեան գաղափարների հետ: Օրինակ՝ մենք աջակցեցինք քրդական հարցի, ինչպէս նաեւ հայ- թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը, աջակցեցինք նաեւ նոր սահմանադրութեանը, սակայն երբ իշխանութիւնը սկսում է խօսել ազգայնական լեզուով եւ չիրականացնել բարեփոխումներ, մենք դա ակտիւ քննադատում ենք: Վերջին շրջանում մեր գլխաւոր խմբագիր Ահմեթ Ալթանի եւ Էրդողանի միջեւ լարուածութիւն է առաջացել, որովհետեւ Ահմեթ Ալթանը բարեփոխումների ուշացումը քննադատեց՝ ասելով, որ Թուրքիայում բարեփոխումներին սպասողները յուսախաբ եղան:*

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Ասում են՝ որքան երկիրը ժողովրդավար է, այնքան խօսքի ազատութիւնը երկրում արժէք է: Կարելի՞ է ասել, որ որքան էլ վերջին տարիներին Թուրքիան փորձում է մօտենալ ժողովրդավարութեանը, միեւնոյն է, էլի կիլոմետրերով հեռու է:

***ՕԶԳԻՒՆ ՕՇՉԵՐ.*** *- Իհարկէ, բայց հիմա Թուրքիան շատ աւելի լաւ վիճակում է, քան տասը տարի առաջ: Թուրքական խնդիրները միայն իրաւական չեն: Թուրքիայում կան հասարակութեան մէջ գաղափարական խնդիրներ, երբ դու մի բան ես ասում, որը հակասում է զինուորական վերնախաւի, օրինակ՝ քեմալիստական կողմի գաղափարներին, քեզ վրայ անմիջապէս յարձակում է լինում: Հրանտ Դինքի սպանութիւնը հէնց դրա վկայութիւնն է, հէնց այդ գաղափարի հետեւանքով Դինքը զոհ դարձաւ: Ու չնայած այս ամէնին՝ Հրանտ Դինքի մասին բացասական լուրեր գրողները շարունակում են դեռեւս աշխատել:*

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Ասում են՝ Դինքի մահով Թուրքիայում շատ տրամադրութիւններ փոխուեցին հասարակութեան մէջ, արդեօ՞ք համամիտ էք:

***ՕԶԳԻՒՆ ՕՇՉԵՐ.*** *- Իհարկէ, բոլորի համար Հրանտ Դինքի մահը շոկ եղաւ, սակայն մինչ օրս այդ ուղղութեամբ իրական հետաքննութիւն չկայ: Հնարաւոր է՝ որոշակի առաջխաղացում է երեւում, բայց կան մարդիկ, ովքեր դեռեւս չեն աջակցում Հրանտ Դինքին, փորձում են վրէժ լուծել: Շատերն էլ ասում են՝ «Մենք բոլորս Հրանտ Դինք ենք, մենք հայ ենք», այս ասելով փորձում են ցոյց տալ ձեւական կողմը, բայց իրականութիւնն այլ է: Իհարկէ առաջխաղացում եղաւ, սակայն դրա մէջ չի կարելի անտեսել այն, թէ քանի տոկոսն էր անկեղծ, շատերը կեղծ էին:*

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացն ի՞նչ արձագանգ գտաւ ձեզանում:

***ՕԶԳԻՒՆ ՕՇՉԵՐ.*** *- Բաւանականչափ արձագանգ չգտաւ, քանի որ Թուրքիայում այն շատ մակերեսային էր քննարկւում: Այսինքն՝ նման մի արտայայտութիւն կայ յայտնի՝ խօսում ես փղի մասին, բայց փիղը չկայ, այսինքն՝ խօսում են մի բանի մասին, որը չկայ: Ակրոբատիկ շարժումներով փորձում են ցեղասպանութեան խնդիրը մի կողմ դնել եւ անդրադառնալ հայ-թուրքական յարաբերութիւններին: Բայց առանց ցեղասպանութեան խնդրի հետ առերեսման՝ թուրքական հասարակութիւնը պատրաստ չի լինի հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը:*

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Այս օրերին Դուք Արեւմտեան Հայաստանում, հայկական թաղամասերում եղաք: Ի՞նչ զգացողութիւններ ունեցաք, արդեօ՞ք կար այն զգացողութիւնը, որ դրանք ուրիշինն են եւ պէտք է վերադարձնել:

***ՕԶԳԻՒՆ ՕՇՉԵՐ.*** *-Մեզ համար շահն այն է, որ ձեզ հետ շփուեցինք, տեսանք, թէ ձեր կեանքում ինչ մեծ մաս է կազմում Արեւմտեան Հայաստանը: Հայերն ապրում են Արարատով, Մալաթիայով, Արաբկիրով եւ այլն: Մինչեւ մենք հարցնում ենք՝ ինչո՞ւ է ֆուտբոլի ֆեդերեցիայի կամ զինանշանի վրայ Արարատ լեռը, եւ պատասխան չկար... շատ տխրեցի, որ մի երկրի խորհրդանիշը գտնւում է միւսի ձեռքում, իսկ Թուրքայում քանի՞ հոգի գիտի Արարատ լեռան մասին կամ քանի՞սն է այն երբեւէ տեսել:*

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

***Շարունակուած էջ 6-էն***

*լիք գործողութիւններում սկզբունքօրէն հակուած է գնալ Իսրայէլի հետ առճակատման, իսկ Իսրայէլն, ընդհակառակը, ելքը տեսնում է Ցեղասպանութեան հարցը շահարկելու մէջ: Հետեւաբար, առաջիկայ դէպքերը կարող են վկայել, թէ որքանով են պատրաստ յաղթահարել միմեանց ձեռնարկելիք խոչընդոտները պաշտօնական Անքարան եւ Թել Աւիւը: Այդ տեսանկիւնից Իսրայէլի գլխաւոր խնդիրը սկզբունքների փոփոխութիւնն է: Նրան հարկ կը լինի կամ նոր քաղաքական գործիքներ ներգրաւել իր հակաթրքական քայլերում՝ ինչպէս օրինակ, քրտական խնդրի շահարկումն ու Իրաքի Քրտստանում իսրայէլական շահերի արմատաւորման համար որոշակի գործողութիւնները, կամ իսկապէս սկզբունքօրէն փոխել վերաբերմունքը Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցում: Առաջիկայ ամիսները ցոյց կը տան, թէ որ ուղին է առաջնային Իսրայէլի համար:*

***Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) փորձագէտ***

ԽՐԱԽՃԱՆՔ
եւ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԷՆՏԷՅԼԻ ԱՐՇԷՆ ԿԻՏՈՒՐ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Շաբաթ, 4 Յունիս 2011
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ

1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել՝ (626) 797-7680
ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ $20.00

massispost.com
daily news updates

## ԼԱ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՈՒԱԳԱԽՄԲԻ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ՆՈՒԻՐՈՒԵԼ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ




*Լոս Անճելըսում կայացել է ԼԱ Ֆիլհարմոնիկ նուագախմբի յոբելեանական՝ 60-րդ պարահանդէսը, որը կազմակերպւում է նուագախմբի միջազգային յանձնախմբի ուժերով:*

*Այդ յանձնախմբում ընդգրկուած են երաժշտասէր հասարակութեան ներկայացուցիչներ – Լոս Անճելըսում հաւատարմագրուած դիւանագէտների կանայք:*

*Այս անգամ ԼԱ Ֆիլհարմոնիկի պարահանդէսն անցկացուել է ՀՀ հովանու ներքոյ եւ նուիրուել ՀՀ անկախութեան 20-րդ տարեդարձին՝ Լոս Անճելըսում ՀՀ գլխաւոր հիւպատոսութեան նախաձեռնութեամբ, LA Times թերթի տեղեկատուական հովանաւորութեամբ եւ Արմաւիա ընկերութեան աջակցութեամբ:*

*Պարահանդէսի ընթացքում ներկայացուել է հայկական դասական երաժշտութիւն՝ Ա. Խաչատրեանի, Տ. Չուխաջեանի, Ա. Տիգրանեանի ստեղծագործութիւննե-*

*Շար.ը էջ 19*

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՄԻ ՁԵՌՆԱՐԿ



*Հովանաւորութեամբ Լա Քրասենթայի հայոց առաքելական Ս. Եկեղեցւոյ եւ նոյն եկեղեցու խորհրդի ատենապետ, անուանի դեղագործ Վահան Ալադադեանի, Շաբաթ, Մայիս 14ին երեկոյեան ժամի 7:00ին տեղի ունեցաւ «Ամերիկեան Միջազգային Երաժշտական» եւ «Մելոդի երաժշտական» դպրոցների մի խումբ սաների համերգը: Բացման խօսքով հանդէս եկաւ վաստակաւոր դաշնակահար Մարի Գայայեանը եւ բարի գալուստի խօսքերից յետոյ անդրադարձաւ համերգի ծրագրին եւ պատանի մասնակիցներին: Դաշնամուրի, ջութակի, թաւջութակի եւ ֆլէտայի վրայ նուագեցին երաժշտական դպրոցների տաղանդաւոր սաները, հիացմունք պատճառելով ներկաներին: Կատարուեցին օտար եւ հայ դասական երաժշտագէտների, դրանց թւում Կոմիտաս,ի Արամ Խաչատրեանի եւ Առնօ Բաբաջանեանի ստեղծագործութիւններից: Պատանի եւ պարմանուհի կատարողներն էին Նայիրա Կարապետեանը, Քրիստինէ Յակոբեանը, Մարի Ղուկասեանը, Սանահին Բալեանը, Մոնթէ Ալադադեանը, Էմիլի Գույումճեանը, Կարէն Յովսէփեանը, Քրիսթինա Կիրիկեանը, Նաթալի Սէքսէնեանը, Գարի Կիրակոսեանը, Ռուբէն Դուրգարեանը, Ալիսա Գալաջեանը եւ վեցը օտար պատանիներ:*

*Բոլոր կատարումները յաջող էին եւ արժանացան հանդիսականների բուռն ծափահարութիւնների: Յատուկ ուշադրութեան արժանացաւ մեծն Կոմիտասի «Քելէր-ցոլէր» հիասքանչ ստեղծագործութիւնը, որն կատարեց պատանի տաղանդաւոր ջութակահար Կարէն Յովսէփեանը: Համերգի աւարտից յետոյ երաժշտական դպրոցի սաներին տրուեցին գնահատագրեր եւ ծաղկեփունջեր: Յաջողութիւններ մաղթելով Լա Քրասենթայի հայոց առաքելական եկեղեցու հոգաբարձութեան եւ «Վեսթ» դեղարանի տնօրէն Վահան Ալադադեանին, յուսանք որ յաճախ առիթ կը ստեղծեն հանրութեան համար ականատես լինելու նման բացառիկ ձեռնարկների:*

**Ն. Բ.**

## ԱՐԹՈՒՐ ՓԻՆԱՃԵԱՆԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ



*Պըրպէնքի Ս. Ղեւոնդ Մայր տաճարի Զօրայեան Թանգարանի եւ «Stephanies Art Gallery»ի կազմակերպութեամբ, անցեալ Հինգշաբթի Մայիսի 19ին, 2011 Արեւմտեան Թեմի Հայց. Եկեղեցւոյ Զօրայեան նորաբաց թանգարանին մէջ, տեղի ունեցաւ նկարչական ցուցահանդէս մը, նուիրուած արուեստահետ: Հազուադէպօրէն վաճառուած են իր գործերը Նիւ Եորքի եւ Նիւ Ճըրզիի շրջաններուն մէջ: Առաւելաբար հետեւած է խորհրդապաշտական եւ տպաւորապաշտական ուղղութեան, նաեւ Cumbism-ին, ի վերջոյ հասնելով գերիրապաշտ դպրոցին:*

*Արուեստագէտի երանգապնա-*



*գէտ Արթուր Փինաճեանի (1914-1999) գործերուն:*

*Սոյն ցուցահանդէսի բացումին ներկայ էին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, փոխ-Առաջնորդ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, ինչպէս նաեւ մամուլի ներկայացուցիչներ եւ արուեստասէր հասարակութեան ընտրանի բազմութիւն մը:*

*Ա. Փինաճեան նախ եղած է երգիծանկարիչ ու նկարիչ եւ ապա նուիրուած է գեղանկարչութեան արուեստին եւ արժանացած պրոնզէ աստղ մետալին: Ապրած է համեստ կեանք մը իր քրոջ Արմէնիկի արգասիքն է գունագեղ բնութիւնն ու ծովափը, յատկապէս Պէլըօրթի ատլանտեանի ափերը: Ինքնատիպ են իր վերացական արուեստի (abstract) գործերը, մասնաւորաբար կտաւի վրայ դրոշմուած երփներանգ համայնապատկերները:*

*Կը շնորհաւորենք սոյն միջոցառման նախաձեռնողները, որոնք «մթնում կորած» տասնեակ տարիներու թաքստոցէն երեւան հանեցին տաղանդաւոր նկարիչի արժէքաւոր ստեղծագործութիւնները:*

*Գ. ՄՈԼՈՅԵԱՆ*

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# Massis Weekly

Volume 31, No. 19 Saturday, MAY 28, 2011

## S.D. Hunchakian Party Western U.S. Region 14th Representative Assembly

On Sunday, May 15, 2011, the 14th Representative Assembly of the Social Democrat Hunchakian Party Western United States took place at Pasadena's S.D.H.P. headquarters with the participation of the elected representatives from various chapters of the Western U.S. The Assembly was also attended by S.D.H.P. Central Committee Chairman Setrak Ajemian; Central Committee members Vasken Kaltakjian and Dr Hampig Sarafian, as well as other party guests.

Following the party anthem the Representative Assembly proceeded with duties and responsibilities of the day. Representatives devoted their unprecedented attention and participation to the day's agenda which included internal organizational matters, regional and wide-ranging Armenian political matters, in addition to the state of affairs of the various organizations under the auspices of the Party. Operating under a serene and constructive atmosphere the Representatives tackled the issues at hand concluding with the appropriate decisions and updating and developing new program guidelines for the region.

The Representative Assembly completed the day's agenda with the election of a new S.D.H.P. Western United States Region Executive Committee. The Committee members are the following; Lena Manoukian, Gabriel Moloyan, Thomas Yeterean, Garry Sinanian, Mehran Khatchadourian, Suren Khudanyan, Vahe Atchabahian, Vasken Khodanian and Vartan Koroghlian. The Representative Assembly concluded with a rendition of Armenian patriotic song "Dour Tzerket Enger".

The newly elected S.D.H.P. Western U.S. Executive Committee, at its first session, unanimously appointed Vasken Khodanian as Chairman of the Executive Committee.

## Sarkisian's General Amnesty Initiative Could Lead to Release of All Political Prisoners

YEREVAN — President Serzh Sarkisian has formally asked the Armenian parliament to declare a general amnesty, a move which is expected to lead to the release of all remaining Armenian opposition political prisons.

In a short statement today, Sarkisian's office said the amnesty would be dedicated to the 20th anniversary of Armenia's independence to be celebrated in September.

Under a relevant bill drafted by Sarkisian's staff, some 400 convicts will be freed while about 2,000 others will have their prison sentences shortened. Other details of the proposed amnesty are not yet known. It did not specify which prisoners will be eligible for early release.

Six prominent Armenian oppositionists are still behind bars. Sarkisian hinted at their impending release as he made a number of concessions to Ter-Petrosian's Armenian National Congress (HAK) late last month.

Those concessions included the lifting of a de facto government ban on opposition rallies in a key Yerevan square and a renewed investigation into the March 2008 deadly clashes between security forces and Ter-Petrosian supporters demanding the rerun of a disputed presidential election.

## US House Members Call for Increased Economic Assistance to Armenia and Karabakh

WASHINGTON, DC -- US House of Representatives, members of the Armenian Caucus, led by Co-Chair Rep. Frank Pallone, Jr. (D-NJ), sent a letter to House Appropriations Subcommittee Chairwoman Rep. Kay Granger (R-TX) and Ranking Member Rep. Nita Lowey (D-NY) urging "not less than $60 million" in economic assistance to Armenia and "not less than $10 million" in humanitarian aid to Nagorno Karabakh for FY2012.

The letter to the Appropriations Subcommittee outlines key policy objectives regarding funding to Armenia and Nagorno Karabakh that are essential to the development and security of the Armenian republic.

In addition, Armenian Caucus members urged Congress to uphold Section 907 of the Freedom Support Act and cease military assistance to Azerbaijan pointing to Azerbaijan's enormous military expenditures, continued cease-fire violations along the line of contact of Nagorno Karabakh, and vitriolic war rhetoric from top government officials.

Signatories to the letter included Congressional Armenian Caucus Rep-

Continued on page 3

## President Obama Nominates John A. Heffern New US Ambassador to Armenia



John A. Heffern

WASHINGTON, DC -- President Obama has nominated John A. Heffern as US Ambassador to Armenia replacing outgoing Ambassador Maria Yovanovich, who will be completing her 3-year tern in June 2011.

John Heffern is a career member of the Senior Foreign Service and currently serves as the Deputy Chief of Mission at USNATO, Brussels.

Prior to his current post, Mr. Heffern served as Deputy Chief of Mission and Executive Assistant to the Undersecretary for Political Affairs at the U.S. Embassy in Indonesia. Mr. Heffern's career has also included overseas assignments to Japan, Malaysia, Ivory Coast and Guangzhou, China.

From 1994-1996, Mr. Heffern served as a Pearson Fellow on the Asia Sub-Committee for the House International Relations Committee. Prior to entering the Foreign Service, Mr. Heffern served in the Office of Senator John C. Danforth as the Senator's Office Director and Research Assistant.

A native of St. Louis, Missouri, and a graduate of Michigan State University, Heffern is married to Libby Dowling Heffern. They have five children, ages 19-26.

## Clinton: Karabakh Conflict Can be Settled Only by Peaceful Means



Foreign Minister Edward Nalbandian and Secretary of State Hillary Clinton

WASHINGTON, DC -- U.S. Secretary of State Hillary Clinton and Armenian Foreign Minister Edward Nalbandian held talks in Washington late on Thursday, with the unresolved Nagorno-Karabakh conflict apparently topping the agenda.

They made no public statements after the meeting which the Armenian Foreign Ministry said touched upon "a broad range of issues" of mutual interest.

"The United States and Armenia have many connections and relationships that span politics and go into family and so much else that is very important to us," Clinton said as she greeted Nalbandian at the State Department. "And we have many, many important issues ahead of us, and I look forward to continuing the important conversation that we've been carrying out."

"The frequency of our meetings proves our commitment to deepen and to strengthen Armenian-American relations," Nalbandian said, for his part. "Due to our joint efforts, we elevated our relationship to a qualitatively new level during the last years."

In a statement on the meeting issued on Friday, Nalbandian's press office singled out the two officials' discussion of "recent developments" in international efforts to broker a resolution of the Karabakh conflict. It quoted Clinton as saying that the dispute can be settled only by peaceful

Continued on page 3

## It Is Our Moral Obligation to Recognize Armenian Genocide – Israeli MP

Israel's Knesset member Zahava Gal-On believes it is Israel's obligation to recognize the Armenian Genocide.

Member of left wing New Movement Meretz party commented for Armenian News-NEWS.am on decision to discuss the Armenian Genocide. She noted that this year's debates are important as they are held in open Committee on Education, Culture and Sports.

"In the last two years Knesset decided to hold discussion of the Armenian Genocide issue in one of the committees but they never discussed in the education committee which is open. We can invite many people to participate in the discussion. It is very important from this viewpoint," she said.

Speaking of the timing of this decision, Gal-On stressed every year representatives of Meretz party raise the issue on the Armenian Genocide in the parliament. This time Israeli government and foreign ministry, due to the issues with the Turkish government, were more flexible on the issue, she assumed.

The MP expressed hope Israel will recognize the Armenian Genocide and that decision "will open new relations between the countries."

"It is our moral obligation but it is really hard to estimate what will happen," she concluded.



Zahava Gal-On

The Committee on Education, Culture and Sports of the Israeli Knesset accepted the demand to discuss the Armenian Genocide recognition in the parliament. Meretz party submitted the issue for discussion in the committee. The demand to discuss the recognition of the Armenian Genocide was adopted by majority vote.

On Monday Israeli Deputy Foreign Minister Danny Ayalon claimed that there is no chance that Israel will recognize the Armenian Genocide, "It is impossible", he said adding that "We can not afford damaging relations with our main strategic partner Azerbaijan because of some controversial historical issues relating to the events which happened a century ago".

## New Video on YouTube Shows "Horizontal" Shooting in Armenia's 2008 Post-Election Clashes

**By Gayane Mkrtchyan**
**Armenianow.com**

It is already two days that a thus far unseen video of shootings during the 2008 post-election street violence in Yerevan has been on YouTube and also circulating on different online social networks. The video arguably shows horizontal gunshots (rather than shots into the air) made from amongst the law-enforcers gathered around a water canon at the scene of the March 1-2, 2008 clashes.

Andranik Kocharian, a member of the disbanded fact-finding group probing the 03/08 case (the group was set up on President Serzh Sargsyan's orders in late 2008, but was dissolved within less than eight months), says that the video material contains much information and that the Special Investigative Service (SIS) should seriously look into it and try to find those who fired the shots.

Still on April 20, President Serzh Sarkisian told top prosecutors and security officials to step up their efforts in investigating the 2008 post-election unrest.

"Try to find new ways of solving those incidents. A lot of time has passed; maybe there are people who were witnesses and didn't want to cooperate with law-enforcement bodies at the time but have now different approaches," stressed the president then.

On May 16, the SIS released a statement in which it called on anyone possessing any information or piece of evidence concerning the circumstances of the March 1-2, 2008 events to come forward and help the investigation.

Kocharian insists that this latest video on YouTube clearly shows one or several police workers releasing aimed fire from their guns.

"If the officer were firing for intimidation purposes, then he should have fired into the air, but after a horizontal shot the bullet may have hit anyone," says Kocharian.

The member of the disbanded fact-finding group thinks facts are especially important for the revelation of circumstances of one citizen's death on that day. The video was shot at the intersection of Leo and Baronian streets very close to the immediate scene of the clashes. (David Petrosian, the citizen in question, was killed near the first entrance to the building in 2 Baronian Street, after being hit in the back with a bullet released from a Makarov pistol).

"Petrosian was hit in the back. It is very possible that he was killed with such a random, inadvertent shot. Let them reveal whether it had anything to do with that or not. This is what makes this video valuable," says Kocharian.

## Turkish Judge of Armenian Origin Granted Asylum in Netherlands

A former Turkish judge of Armenian and Kurdish origins has been granted political asylum by the Netherlands.

According to the Turkish Hurriyet Daily, Caghatai Cetin, had fled to Netherlands with a fake Hungarian passport on 15 January 2010 after he was fired over accusation of "insulting the Turkish state and a prosecutor", "libel" and "faking documentation".

Caghatai Cetin was later sentenced to 17 years in prison in absentia.

Upon his surrender to the authorities in Netherlands, Cetin claimed he had been subjected to pressure for his political views and for his Armenian and Kurdish roots.

Cetin started his career in judiciary in 2005 and since then has for several times informed the Turkish judicial bodies about accounts of "corruption and abuse" in the judicial system.



Caghatai Cetin

Cetin has also been critical of the Ottoman Turks' ruling in early 20th century, saying that what they did to Armenians and Kurds constituted genocide – another factor believed to have caused him problems in Turkey.

## ICG - Situation in Javakheti May Deteriorate

The International Crisis Group (ICG) published a report on Javakhk earlier this week which says "the lack of knowledge of the state language (Georgian) and poverty encourages migration from the region to Armenia and Russia."

The authors of the report urge the government of Georgia to lead a more active integration policy by providing informations in Armenian to Javakheti residents rendering it understandable for the Armenian population. In this context, they point out Tbilisi's fear that Russia can use Javakheti against Georgia provoking radical moods there. The report underlines Armenia's stabilizing approach towards Javakheti.

The report mentions, Javakheti residents do not feel like full-fledged citizens, so prefer to become involved in the political and cultural life of neighboring Armenia, whose nationalist groups are quick to argue that they are the victims of ethnic discrimination due to Georgian government policies and to amplify their grievances over poverty, unemployment, education and the lack of formal laws recognizing Armenian as a "regional language" in Javakheti.

The report also calls on Georgian Authorities to facilitate public discussions on issues, such as integration, language and human rights, provide long-term budgetary resources to make educational projects such as multilingual schools, teacher training, translation of Georgian textbooks into Armenian and Georgian-as-a-second-language courses more systematized and sustainable, encourage more private investment, with a view to bringing the Javakheti economy ultimately to the national level, to fund local television stations' translations of nationwide programs, including talk shows, and encourage the public broadcaster to improve coverage of Javakheti.

## Armenian Armed Forces Take 'Retaliatory' Actions On Karabakh Frontline

YEREVAN -- The most recent casualties suffered by the Azerbaijani army around Nagorno-Karabakh are the result of "retaliatory" actions taken by Armenian troops, Armenia's Defense Ministry said on Tuesday.

"That happened as a result of the Armenian side's actions aimed at punishing and liquidating Azerbaijani snipers," the ministry spokesman, Davit Karapetian, said, referring to the deaths of two Azerbaijani soldiers reported over the weekend.

"In recent days, the Azerbaijani side has stepped up military actions along the line of contact," Karapetian told RFE/RL's Armenian service. "As a result of that, hundreds of sporadic and sniper gunshots have been fired at the Armenian side. The Armenian side has silenced those firing positions with retaliatory actions."

The two Azerbaijani soldiers were reportedly shot dead at different sections of the Armenian-Azerbaijani "line of contact" east of Karabakh, in what the Azerbaijani military called a ceasefire violation by the Armenians.

The incidents occurred less than a month after three Karabakh Armenian soldiers and a civilian man were killed by sniper fire from Azerbaijani army positions. Military officials in Yerevan and Stepanakert accused Baku of deliberately heightening tensions along the heavily fortified frontline. Azerbaijani officials dismissed the accusations.

Armenian Defense Minister Seyran Ohanian last week effectively confirmed reports that Karabakh Armenian army units have been instructed to give a "tough riposte" to the enemy.

"Those [Azerbaijani] actions are answered with a use of disproportionate force. That means they are punished with much bigger casualties," Ohanian told journalists. He claimed that the Azerbaijani military is underreporting its losses.

"Responsibility for the Azerbaijani losses fully falls upon the Azerbaijani side," said Karapetian.

The deadly skirmishes continue despite international efforts to bolster the shaky ceasefire regime in the Karabakh conflict zone which has been in effect since 1994. The United States and the European Union seem increasingly worried that the sniper warfare could degenerate into anther all-out war for the Armenian-controlled territory.

# ArmenBar Annual Meeting In San Francisco Reaches New Heights



SAN FRANCISCO -- More than a hundred-fifty Armenian American lawyers, judges, and community leaders gathered in the city by the bay from April 29 to May 1, 2011 for a breakthrough convention of the Armenian Bar Association.

"This has been the most fantastic convention of the Armenian Bar Association," Chairman Edvin Minassian said. "We now return to work with high spirits and a renewed dedication to justice-before our country, our homeland, and our history."

The weekend was officially opened at the California Supreme Court, where Chief Justice Tani Cantil-Sakauye received the members of the ABA, first at a meeting of the California Judicial Council and then at a private luncheon reception. Drawing from her own background as a Philippina, Chief Justice Cantil-Sakauye said that she shared with the ABA a deep faith that a dedication to the national heritage "translates directly to our commitment to the rule of law and the strength of our community."

The Chief Justice also expressed her gratitude for the contribution of so many Armenians, especially Governor George Deukmejian, both to her professional career and to the law at large. It was fitting, then, that several Armenian American legal luminaries were in attendance. Supreme Court Justice Marvin Baxter, a guiding member of the ABA, presided over the afternoon meeting and later led a tour through the Supreme Court building. Retired Supreme Court Justice Armand Arabian and Court of Appeal Justice Charles Poochigian delighted the crowd with short, sweet reflections.

The convention was reconvened in the evening, this time at the rooftop hall of the Union Square Marriott Hotel, where Ann Lousin, a celebrated professor of commercial law at the John Marshall Law School in Chicago, presented the weekend's first public service award. The recipient was David Balabanian, a premier civil litigator with the law firm Bingham McCutchen, who spoke of the complex controversies surrounding the 103-foot concrete cross on San Francisco's Mount Davidson, the tallest monument ever dedicated to the Armenian Genocide. With signature wit and passion, Balabanian told the compelling tale of how the Armenian community-represented pro bono by his law firm-was able to crush a Turkish-funded lawsuit launched against the memory of 1915.

A night of festivities gave way to a serious and sober morning, with the first of two extensive panels, titled "Armenia on the Road to Judicial Independence and Legal Reforms." The Republic of Armenia's newly appointed Minister of Justice, Hrayr Tovmasyan, led the discussion with an eloquent and candid survey of the problems plaguing the post-Soviet country's legal system. "The elimination of corruption, the independence of the judiciary, the protection of human rights, the supremacy of law-these are problems that we must face together, if Armenia is ever to become the land of our dreams," Tovmasyan said.

The minister's general comments were complemented by the detailed accounting presented by Yerevan State University professor Ruben Melikyan, who addressed specific problems-such as the lack of a system of precedent in Armenia-and offered specific solutions toward reforming the judicial culture in Armenia. His proposal, that diasporan lawyers and judges be invited to take on official, legally binding roles in the administration of law in the republic, was met with particular enthusiasm. Also on the panel, and contributing the diaspora's perspective, were Antranig Kasbarian, director of the Tufenkian Foundation, and Garin K. Hovannisian, author of Family of Shadows.

The second panel, "The Armenian Genocide's Legal Significance in Recovery Litigation," was powered by a distinguished panel of experts on international law: Harut Sassounian, public commentator and political scientist specializing in international law; Steven Dadaian, lawyer, advocate, and leading draftsman of legislation that governs genocide litigation in the United States; Professor Lee Crawford-Boyd, chief architect of genocide litigation ongoing in the California courts; and Federico Hairabedian, Argentine Armenian lawyer who recently won a historic lawsuit against Turkey in Argentine Federal Court, which issued a verdict recognizing the Armenian Genocide and the murder of his family by Ottoman Turkey.

"We set a landmark in which we took the genocide, which is an international crime, into a federal court, but we did this without considering the next step," Hairabedian said. Indeed this was the panel's original goal and ultimate success: to serve as the foundational discussion about that "next step"-how to organize the disparate efforts of Armenians across the world into a clear and comprehensive international campaign to seek justice for the victims of the Armenian Genocide.

Tucked between the extensive Saturday deliberations was the gala luncheon, which was billed as the celebratory event of the weekend convention, but which transformed, through successive heavyweight speeches, into a long, saturated afternoon.

After an elegant and heartrending introduction by founding member Vicken Simonian, Garo Ghazarian took the podium to deliver the keynote lecture. Drawing from his friendship with Simonian, who was his athletic adversary and best friend on the racetracks of Southern California, Ghazarian inspired the crowd with his larger-than-life story of failure and redemption in America. He concluded with a fascinating chronicle of his recent mission to Yerevan, where he monitored the progress of civil rights and visited Raffi K. Hovannisian, the first foreign minister of Armenia and present-day leader of the Heritage party who had declared a freedom fast at Liberty Square.

Raffi Hovannisian himself, who had made a surprise appearance in San Francisco, followed Ghazarian to address the members of the Armenian Bar Association, the organization he founded in 1989. "Our nation is not lost," he said. "We still have a cause to deliver on-to make Armenia the land of liberty, sovereignty, and the national interest that we all expect it to become." Hovannisian also expressed his appreciation to David Balabanian, Walter Karabian, and all those who nourished the ABA from its humble beginnings, and fueled its evolution into a pioneering force of justice in the United States.

The gala luncheon was closed by Raffi's brother, Armen K. Hovannisian, who had organized and presided over the weekend's many events and festivities, and who now stood before the crowd to receive the Armenian Bar Public Service Award for decades of dedication to law and community. In a powerful and deeply moving acceptance speech, which incited the tears and laughter of a hundred lawyers and judges, Hovannisian spoke about his grandmother Siroon Hovannisian and grandfather Hovakim Kotcholosian, who represent for him the different faces of the Armenian Genocide, as they do the common formula of his service to his community and country. "I'm not one of those people who can leave a mark," he said. "I'm somebody who carries the marks of others."

Ohlrich, Clerk of the Court, CThe members of the Armenian Bar Association left San Francisco on Sunday with a newly elected 17-member board, including the most recent class of Michael Amerian, Ara Babaian, Garo Ghazarian, Armen K. Hovannisian, Laura Karabulut, Edvin Minassian, and Gary Moomjian. The executive officers for the 2011-2012 term were also elected: Edvin Minassian, chairperson; Garo Ghazarian, vice chairperson; Harry Dikranian, vice chairperson; Sara Bedirian, treasurer; and Hovanes Margarian, secretary. Sonya Nersessian will continue in her role as chairperson ex-officio.

## US House Members Call for Increased Assistance

**Continued from page 1**

resentatives Gary Ackerman, Joe Baca, Shelley Berkley, Howard Berman, Bruce Braley, David Cicilline, Jim Costa, Joseph Crowley, Eliot Engel, Anna Eshoo, Chaka Fattah, Barney Frank, Elton Gallegly, Rush Holt, Jim Langevin, Daniel Lipinski, Stephen Lynch, Edward Markey, James McGovern, Grace Napolitano, Gary Peters, Charles Rangel, Steven Rothman, Loretta Sanchez, John Sarbanes, Brad Sherman, Jackie Speier, and Henry Waxman.

The House Appropriations Subcommittee on State, Foreign Operations and Related Programs is scheduled to consider the measure on July 27.

## Karabakh Conflict Can be Settled Only by Peaceful Means

**Continued from page 1**

means.

According to the statement, Clinton assured her Armenian counterpart that the United States will continue to lend "full support" to Armenia and Azerbaijan in their search for a compromise settlement.

Philip Gordon, the U.S. assistant secretary of state for Europe and Eurasia, told a U.S. congressional panel on Wednesday that Washington plans to "increase our engagement" in the Karabakh peace process through the OSCE's Minsk Group, which it co-chairs with Russia and France.

"In that regard, we strongly believe that the time has come to finalize and endorse the Basic Principles [of a Karabakh settlement] and move to the drafting of a peace agreement," Gordon said, echoing a joint statement issued by the Minsk Group co-chairs last month.

Later on Thursday, Nalbandian held separate meetings with Gordon and Robert Bradtke, the group's U.S. co-chair. An Armenian Foreign Ministry statement said he discussed with the latter a fresh visit to the region planned by Bradtke and his Russian and French opposite numbers. No further details were reported.

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

## Lecture at NAASR by Susan Pattie On Bringing Armenian History to Young Readers




BELMONT, MA -- Author and anthropologist Dr. Susan Pattie, Director of the Armenian Institute in London and Senior Research Fellow, University College London, will give a lecture entitled “Who Are the Armenians? Bringing Armenian History and Culture to Young Readers” on Thursday, June 2, 2011, at 8:00 p.m., at the National Association for Armenian Studies and Research (NAASR) Center, 395 Concord Ave., Belmont, MA.

While in the area, Dr. Pattie will also speak to fourth graders at St. Stephen’s Armenian Elementary School in Watertown.

Who Are the Armenians? is a guide for both children and adults to learn about the Armenian people. Aimed at children aged 5–12, the book brings the 3,000-year-old Armenian history and culture to life through folktales, language, food, religion, music, dance, art, poetry, sports, and games. The book includes information about the Republic of Armenia and also explains how Armenians have made homes all over the world. Who are the Armenians? presents the lives of children in Armenia and diaspora countries showing how they live today. A CD is included with songs, poems, dance music, and spoken words. (The book Who Are the Armenians? has no connection with the still-existing permanent and travelling exhibitions of the same name created earlier by the Armenian Library and Museum of America in Watertown, MA.)

Dr. Susan Pattie is a Senior Research Fellow at University College London (anthropology), teaches for the Syracuse University London Program, and is Director of the Armenian Institute. She was a Visiting Scholar in the Armenian Studies Program and Anthropology Department at the University of Michigan in autumn 2009. Author of Faith in History: Armenians Rebuilding Community (Smithsonian Institution Press) and numerous other publications, Dr. Pattie’s research has focused on Armenians in diaspora, beginning with fieldwork in Cyprus.

Admission to the lecture at NAASR is free (donations appreciated). The NAASR Center is located opposite the First Armenian Church and next to the U.S. Post Office. Ample parking is available around the building and in adjacent areas. The lecture will begin promptly at 8:00 p.m.

More information about the lecture is available by calling 617-489-1610, faxing 617-484-1759, e-mailing hq@naasr.org, or writing to NAASR, 395 Concord Ave., Belmont, MA 02478.

## Colonel George Juskalian Post Office Building Officially Designated in Virginia



**L-R: Lara Juskalian (granddaughter), Tanya Juskalian (daughter-in-law), Rep. Frank Wolf (R-VA), Kevork Juskalian (son), Mrs. Lucine Juskalian (wife), Elissa Jamaldinian (daughter), Joe Jamaldinian (son-in-law) and George Jamaldinian (grandson)**

WASHINGTON, DC - On Saturday, May 21, the United States Postal Service (USPS) facility located in Centreville, Virginia was officially designated the “Colonel George Juskalian Post Office Building” .

Colonel George Juskalian was one of the most highly decorated Armenian-Americans to ever serve in the U.S. Military. He was a member of the Armenian Assembly and an active member of St. Mary Armenian Church. Col. Juskalian passed away on July 4, 2010, at age 96, having served nearly 30 years on active duty. His tenure in the U.S. Military consisted of tours in World War II, Korea and Vietnam, including 27 months spent in prisoner of war camps after being captured by the Germans in Tunisia. Col. George Juskalian was buried with full honors in Arlington National Cemetery on October 19, 2010.

According to records kept by Col. Juskalian, he would be the 55th Armenian-American to be buried in Arlington National Cemetery.

Legislation to officially designate the Centreville Post Office was first introduced in the House of Representatives last year by Congressman Frank Wolf (R-VA), a staunch human rights advocate and supporter of U.S. reaffirmation of the Armenian Genocide. Unanimously clearing the House and Senate, the bill was signed into law by President Obama on January 4, 2011.

During the ceremony on Saturday, Rep. Wolf spoke eloquently of Col. Juskalian’s life and legacy, highlighting his roots as one of the many first generation descendants of Armenian Genocide survivors who bravely enlisted in the U.S. Military. Rep. Wolf also read aloud statements from former Senators John Warner (D-VA) and Bob Dole (R-KS). Virginia State Delegate James LeMunyon (R-Fairfax) also presented the Juskalian family with a “Certificate of Recognition” from Virginia Governor Bob McDonnell (R-VA).

## St. Nersess Armenian Seminary Annual Father’s Day Picnic on Sunday, June 19



**College-aged students and young professionals volunteer their time to staff the St. Nersess Father’s Day Picnic**

NEW ROCHELLE, NY -- St. Nersess Armenian Seminary will once again hold the annual Father’s Day Picnic on Sunday, June 19. This traditional Armenian-style picnic will feature live Armenian music by a talented, all-star ensemble including Dick Barsamian, Harold Hagopian, Sevan Simonian, and Jim Dardouni. Delicious food will be served under a spacious tent on the beautiful grounds of the Seminary in New Rochelle, NY.

“The St. Nersess Father’s Day Picnic has turned into an anticipated family tradition celebrating all fathers while supporting our Seminary and its efforts to prepare future spiritual fathers,” said Very Rev. Fr. Daniel Findikyan, Dean. “We expect hundreds of people to enjoy an afternoon filled with fellowship, good food and lively activities for all.”

The day will begin with Divine Liturgy celebrated at 10 a.m. in the Seminary chapel, followed at noon by picnic festivities. There will be children and teen activities held throughout the afternoon, along with a variety of vendors selling an array of items, including the popular “Armenian Vendor” Baykar Dervishian. A White Elephant sale will also take place simultaneously on the grounds.

Merchant and general sponsorships are being secured to help underwrite the cost of this event so that all proceeds on the day of the Picnic will directly benefit the ongoing mission of St. Nersess Armenian Seminary, which is to prepare leaders in ordained and lay ministries through graduate degree and continuing education programs.

Additionally, the Seminary has launched a Super Raffle with winners being announced the day of the Picnic. Only 300 tickets are available for this raffle, with each ticket costing $50 each. The three cash prizes awarded will be $3,000, $1,500 and $500. To purchase your ticket, with great odds to win, call the Seminary office at 914-636-2003.

More general information about the St. Nersess Father’s Day Picnic may be found online at www.stnersess.edu.

Parking and admission are free for this event that will be held rain or shine. Everyone is encouraged to bring lawn chairs and tavloo boards to sit and take in the afternoon’s scenery and sounds.



# ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՒՆՈՒՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԵՕԹԱՆԱՍՈՒՆԱՄԵԱԿ (1863-1941)

*ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՑ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ*

*Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքի Պատրիարքական Փոխանորդն էր Մկրտիչ Արքեպիսկոպոս Աղաւնունի Եղիշէ Դուրեան Պատրիարքէն սկսեալ յաջորդող Թորգոմ եւ Մեսրոպ Պատրիարքներու գահակալութեանց շրջանին: 1941 Օգոստոս 24-ին վանքի իր բնակարանին մէջ կը վախճանէր Մկրտիչ Արքեպիսկոպոս 78 տարեկանին: Տիպար հոգեւորականի, բանասէրի եւ իսկական վանականի վաստակով պատմութեան կ՚անցնէր հին սերունդի կարկառուն, աշխատունակ եւ համեստ այս հոգեւորականը՝ վարչական, առաջնորդական, եւ մասնաւորաբար Երուսաղէմի հայոց վանքերուն յատուկ պատմագիտական հրատարակութիւններ յանձնելէ ետք Հայ Եկեղեցիին, Հայ Երուսաղէմին եւ հայոց պատմութեան:*

## Առաջնորդական Փոխանորդը

*Ծնած էր Պարտիզակ 1863 թուին, աշակերտեցաւ Եղիշէ Դուրեան Վարդապետին ծննդավայրի Ներսէսեան Վարժարանին մէջ, եւ շուտով կրօնաւոր դառնալու իր փափաքը յայտնեց Նիկոմիդիոյ Առաջնորդ Ստեփաննոս Արքեպս. Յովակիմեանին, որմէ սարկաւագ ձեռնադրուեցաւ 1888-ին: Մինչ սարկաւագ էր Ջէնկիլէր գիւղը կ՚այցելէր ու տեղւոյն Ս. Մինաս կիսաւփուլ եկեղեցին կը տեսնէր որուն մէջ կը պահուէր Արմաշու Վանքին նախկին վանահայր Գէորգ Եպս. Ալիքսանեանի արծաթեայ վարդապետական գաւազանը: Գաւազանին տպաւորութեան տակ տարիներ ետք ան գրեց իր առաջին յուշը «Գաւազանին Հմայքը կամ Արիութիւնը» խորագրով, ուր ըսած է թէ «փլչելու վտանգին մէջ էր եկեղեցին եւ պէտք էր վերաշինել զայն, բայց շինելու համար պէտք էր վարդապետ դառնալ ու գաւազան կրել, ո՛չ այն արծաթեայ գաւազանը, այլ այն ոգին որ նո՛ր կեանք պիտի ներշնչէր ու զօրացնէր զիս վերաշինելու այդ կիսափուլ տաճարը»:*

*Ահա այս եղաւ նորընծայ սարկաւագ Աղաւնունիի կոչման ձայնը եւ ուղին երբ նոյն Ստեփաննոս Սրբազանէն 1890 թուին վարդապետ ձեռնադրուեցաւ իր նախկին Գրիգոր Կուճուկեան անունը փոխուելով Մկրտիչ Աղաւնունիի: Աղաւնունի Արմաշու վանքին Ս. Զարխափան տաճարին մէջ կ՚ընդունէր «գաւազանի իշխանութիւնը», եկեղեցաշէն Գէորգ Ալիքսանեան եպիսկոպոսի շիրիմին մօտիկ, անոր Ջէնկիլէրի եկեղեցիին մէջ պահուած վարդապետական գաւազանի հմայքին եւ ազդեցութեան տակ:*

*Յիրաւի Ջէնկիլէր կ՚ըլլար Աղաւնունի Վարդապետի առաջին վայրը ուր հոգեւոր ծառայութեան կը կոչուէր սկսելու համար Ս. Մինաս եկեղեցւոյ վերաշինութեան գործին, որուն լծուեցաւ «չորս տարի անընդհատ աշխատանք տանելով որ ողորմութեամբն Աստուծոյ ի գլուխ ելաւ: Կատարեցինք մեր պարտականութիւնը հմայքովը գաւազանին», ինչպէս ինք գրեր էր 1914-ին, այս անգամ արդէն եպիսկոպոսական իշխանութեամբ: Ջէնկիլէրի իր առաջին փորձառութենէն ետք Աղաւնունի Վարդապետ նախ վարեց Նիկոմիդիոյ Թեմին փոխանորդութիւնը, եւ ապա՝ Կուտինայի միացեալ Թեմին (Քէօթահիա եւ Աֆիոն Գարահիսար), ուր մինչեւ 1905 ծառայեց ու կառուցանել տուաւ Էսկիշէհիրի Ս. Երրորդութիւն եկեղեցին եւ օծումն ալ ինք կատարեց:*

## Առաջնորդ Եգիպտահայ Թեմին

*Քսաներորդ դարու սկիզբը Եգիպտոս քաղաքական գետնի վրայ անկախ երկիր մը չէր եւ Օսմանեան գերիշխանութեան տակ կը գտնուէր, եւ այդ պատճառաւ ալ 1863-ի Ազգային Սահմանադրութիւնը կը գործադրուէր Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ թեմական կառոյցներուն համար: 1905 թուին էր որ Մկրտիչ Ծ. Վարդապետ Աղաւնունի թեմին առաջնորդ ընտրուելով եպիսկոպոսական ձեռնադրութիւն կը ստանար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ 1910 թուին Տ.Տ. Մատթէոս Բ Իզմիրլեան Ամենայն Հայոց Կաթողիկոսէն տասը ձեռնասուններու հետ միասին, կէսը անոնցմէ՝ Արմաշու Դպրեվանքի առաջին շրջանաւարտներէն:*

*Թէեւ Եգիպտահայ Թեմէն ներս կարճ եղաւ Մկրտիչ Եպիսկոպոսի թեմակալ առաջնորդի պաշտօնավարութիւնը, միայն եօթը տարիներ, սակայն ան կատարեց կենսական աշխատանք եւ իրագործեց Գալուստեան Ազգային Վարժարանի նոր շէնքին կառուցումը 1907 թուականին որ իսկապէս եգիպտահայութեան պարծանքը եղաւ մինչեւ մեր ուսանողական օրերը երբ մենք եւս կ՚աշակերտէինք նոյն վարժարանին: Այսուհանդերձ, ինչպէս բնութեամբ նաեւ վարչական գործերու մէջ համեստ եւ մեղմ ըլլալով, իր դէմ բողոքներ սկսան եւ ինք քննադատութեանց ենթակայ եղաւ:*

*Մկրտիչ Եպիսկոպոս ստիպուեցաւ 1912-ին հրաժարիլ իր առաջնորդական պաշտօնէն ու այդ մասին տեղեկացնել Կ. Պոլսոյ Պատրիարքութեան: Երկու տարի ետք որպէս Առաջնորդ Եգիպտահայ Թեմին իրեն յաջորդեց Արմաշական Թորգոմ Եպս. Գուշակեան որ նախապէս Առաջնորդն էր Սեբաստիոյ Թեմին ու եպիսկոպոս ձեռնադրուած նոյն ատեն Աղաւնունի Սրբազանին հետ միասին: Թորգոմ Արքեպիսկոպոս երկար տարիներ ձեռնհասօրէն վարեց իր պաշտօնը մինչեւ 1931, կառուցանել տալով եւ օծելով հոյակապ Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցին 1928 թուականին, որմէ ետք ընտրուեցաւ Պատրիարք Հայոց Երուսաղէմի:*

## Կ. Պոլիս եւ Երուսաղէմ

*Պոլսոյ Պատրիարքութեան որոշումով Աղաւնունի Սրբազան երկու տարի պաշտօնավարելէ ետք Պանտրմայի Թեմէն ներս, 1914-ին անցաւ Կ. Պոլիս որպէս քարոզիչ մինչեւ 1916: Երբ նոյն տարին Տ.Տ. Սահակ Խապայեան Կիլիկիոյ Կաթողիկոսը Երուսաղէմ աքսորուեցաւ իբր Կաթողիկոս-Պատրիարք Հայոց Թուրքիոյ, Մկրտիչ Եպիսկոպոս իր կողքին մնաց, եղաւ Սինոդի անդամ, ապա դարձաւ միաբան Ս. Յակոբեանց ուխտին 1921 թուին, եւ գրական բեղուն, արժէքաւոր եւ մնայուն գործեր արտադրեց ուղիղ քսան տարիներ մինչեւ իր կեանքի վախճանը՝ 1941 թուին: Երեք Պատրիարքներու յաջորդութեանց միջոցին Մկրտիչ Եպիսկոպոս, որ Խորէն Ա Մուրատբէգեան Ամենայն Հայոց Կաթողիկոսէն արքեպիսկոպոսութեան բարձրացած էր, վարեց Պատրիարքի Փոխանորդութեան պաշտօնը, պահեց Աթոռին անդորրը, եւ անձամբ Պատրիարքական Ասան յանձնեց յաջորդաբար Եղիշէ Դուրեան, Թորգոմ Գուշակեան եւ Մեսրոպ Նշանեան Պատրիարքներուն:*



## Գրական Վաստակն ու Վախճանը

*Վարչականէն աւելի Աղաւնունի Սրբազան փայլեցաւ պատմագիտական բնագաւառէն ներս: Ան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կտակեց գրական եւ պատմական շարք մը հմտալից գործեր որոնք մինչեւ այսօր կը մնան որպէս սկզբնաղբիւր Երուսաղէմի հայոց վանքերուն ծագման եւ ծաղկման մասին: Իր գլխաւոր աշխատասիրութիւնը եղաւ «Միաբանք եւ Այցելուք Ս. Երուսաղէմի» 550 էջ հատորը, ուր կը բովանդակուին սկզբնական շրջանէն մինչեւ 1929 գրաւոր աղբիւրներու մէջ երեւցած Սրբոց Յակոբեանց միաբանութեան անդամներու ցանկը:*

*Վերջերս Լոս Անճելըսի մէջ անգլերէն լեզուով պատմագիտական լուրջ, ծաւալուն, եւ համապարփակ հատոր մը ի լոյս ընծայեց Երուսաղէմի ընծայարանի նախկին սաներէն Հայկ Ա. Գրիգորեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան մասին: Հոն հեղինակը կը վկայէ թէ Աղաւնունի Սրբազանի «Միաբանք եւ Այցելուք» գիրքը կը պարունակէ նաեւ անուններն ու նկարագրութիւնները յայտնի եւ յիշատակելի հոգեւորական այցելուներու՝ կաթողիկոսներ, Կ. Պոլսոյ պատրիարքներ, եպիսկոպոսներ եւ վարդապետներ, իւրաքանչիւր անուան կցուած կենսագրական տեղեկութիւններով:*

*Մկրտիչ Արքեպիսկոպոս Աղաւնունիի գրական վաստակին մաս կազմեց նաեւ շարքը Երուսաղէմի հին վանքերու մանրակրկիտ նկարագրութիւնները որոնք հրատարակուեցան 1931-ին «Հայկական Հին Վանքեր եւ Եկեղեցիներ Ս. Երկրին Մէջ» 480 էջնոց ստուար հատորով: Այս աշխատասիրութեան մէջ հեռաքրքրական պիտի ըլլայ տեսնել այդ վանքերէն ոմանց անունները, որոնք են.*

*- Գեթսեմանիի Ս. Աստուածածին Եկեղեցին*
*- Քրիստոսի Ըմբռնման եկեղեցին Գեթսեմանիի մէջ*
*- Քրիստոսի Ծննդեան Եկեղեցին ու Բեթղեհէմի Հայոց Վանքը*
*- Պետրոսի Վանքը*
*- Իւղաբերից Եկեղեցին*
*- Յովհաննու Կարապետի Վանքը Յորդանանի եզերքը*
*- Զաքարիայի Վանքը Նազարէթի մէջ:*

*Սուրբ Տեղեաց հայ վանքերէն զատ Աղաւնունի Սրբազան գրած է նաեւ «Մատենագրական Նշմարներ» վերնագրի տակ ստուգաբանական երկ մը շարք մը եզրաբանութեանց յատուկ:*

*Մկրտիչ Աղաւնունի Արքեպիսկոպոսի յուղարկաւորութիւնն ու վերջին օծման կարգը կատարուեցան Մեսրոպ Պատրիարք Նշանեանի ձեռամբ եւ դամբանականը խօսեցաւ Բերիոյ Թեմի Առաջնորդ Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեան անդրադառնալով հանգուցեալի պատմագիտական հարուստ վաստակին եւ Հայ Եկեղեցւոյ նուիրեալ ծառայութեան: Վախճանեալ Սրբազան Հօր մարմինը թաղուեցաւ Ս. Փրկիչ հայոց վանքի միաբանական գերեզմանատան մէջ:*


ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506



ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# «ԶԱՏԻԿ» ՄԱՆԿԱՏԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ

***ԱՐՓԻՆԷ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ***

*Մօտենում է Յունիսի 1-ը՝ երեխաների պաշտպանութեան միջազգային օրը, որին իւրաքանչիւր մանուկ սպասում է սրտի թրթիռով: Մանկատան երեխաները նոյնպէս բացառութիւն չեն, եւ նրանք էլ սպասում են այդ օրուան, սակայն ի տարբերութիւն այլ երեխաների՝ մանկատան սաները, առաւել քան միւսները, ունեն աջակցութեան եւ պաշտպանութեան կարիք:*

*«Զատիկ» մանկատանը բնակւում է շուրջ 90 երեխայ: Նրանցից 40-ը արդէն չափահաս են եւ պէտք է դուրս գան մանկատան խնամակալութիւնից, սակայն շարունակում են բնակուել այնտեղ՝ սպասելով պետութեան կողմից հասանելիք բնակարանների:*



*Կեանքի տարբեր պատմութիւններ ունեցող, բայց միեւնոյն ճակատագրին արժանացած երեխաները այսօր եւս մէկ անգամ կանգնել են ընտանիքից զրկուելու վտանգի առաջ, քանի որ մանկատունը նրանց տունն է, իսկ մանկատան երեխաները՝ նրանց ընտանիքը: Իհարկէ, բոլորիս ցանկութիւնն է ապրել մի երկրում, որտեղ իւրաքանչիւր երեխայ կը լինի իր ծնողի կողքին, առողջ եւ լիարժէք ընտանիքում, կը ստանայ մայրական, ընտանեկան ջերմութիւն եւ սէր: Սակայն իրականութիւնն այլ է. մեր երկրում կա ծնողական խնամքից զուրկ մօտ 400 երեխայ:*

*Այդ երեխաների մի մասը չունի ծնողներ, ոմանք՝ ունեն, բայց տարբեր իրավիճակներից դրդուած՝ յայտնուել են մանկատանը: Այդ պատճառները տարբեր են՝ առողջական խնդիրներ (ալկոհոլիզմ, թմրամոլութիւն), իրաւական բնոյթի դրդապատճառներ (ամուսնալուծութիւն, երեխայի ապօրինի ծնունդ, ծնողի ազատազրկում), սոցիալական անապահով վիճակ եւ այլն: Պատճառները տարբեր են, բայց դրանք կան: Առողջ ընտանիքի բացակայութեան դէպքում մանկատունը թերեւս միակ փրկութեան օղակն է. հակառակ դէպքում բարձիթողի վիճակը երեխային կը տանի կործանման, իսկ այստեղ երեխան ստանում է ճահճից դուրս գալու հնարաւորութիւն:*

*Գտնուելով այնտեղ եւ լսելով երեխաների պատմութիւնները՝ չէի ուզում հաւատալ, որ նման ծնողներ, անգամ չեմ ուզում նրանց ծնող կոչել, գոյութիւն ունեն: Խօսքս այնպիսի ծնողների մասին է, ում սեփական երախան անգամ գերադասում է բնակուել մանկատանը, քան նրա հետ: Այս մասին նշեցին հենց իրենք՝ «Զատիկ» մանկատան որոշ սաներ, որոնք այստեղ դաստիարակութիւն եւ կրթութիւն ստանալու հնարաւորութիւն ունեն եւ կարող են խուսափել ծնողների կողմից պարտադրուած անցանկալի քայլերից (գողութիւն, մուրացկանութիւն եւ այլն):*

*Երբ «Զատիկ» մանկատանն էի, պատահաբար ականատես եղայ, թէ ինչպէս մանկատան նախկին սաներից մէկը, որը չցանկացաւ ներկայանալ, արդէն իր դստեր հետ եկել էր այցելութեան իր իսկ բնորոշմամբ հարազատ մի վայր, որը փոխարինել էր իր այն ընտանիքին, որից բախտի քմահաճոյքով զրկուած է եղել: Այսօր նա ամուսնացած կին է, ունի դուստր, ում անմնացորդ տալիս է իր մայրական սէրը, որը նա չի զգացել, որի պակասն էլ փորձել են լրացնել մանկատան դաստիարակները: Իհարկէ, մայրը անփոխարինելի է, եւ միշտ ես զգում մօր կարիքը, բայց նա ջերմ յուշեր ունի մանկատան հետ կապուած եւ ժամանակ առ ժամանակ այցի է գալիս:*

*19-ամեայ Սարգիս Ներսիսեանը արդէն մէկ տարի է, ինչ չի համարւում մանկատան սան, բայց շարունակում է բնակուել այնտեղ, մինչ պետութիւնը նրան կ՚ապահովի բնակարանով: Սարգիսը 2-րդ կարգի հաշմանդամ է եւ ունի աչքերի վիրահատութեան կարիք, սակայն դրա հետ մէկտեղ այսօր նա գումար է վաստակում զարդեր պատրաստելով, շալեր գործելով եւ վաճառելով: Նա անգամ չի ուզում պատկերացնել, թէ ինչ պէտք է անի, եթէ մանկատունը փակուի: Ինչպէս իր նման բազում երեխաներ, նա էլ կը յայտնուի փողոցում:*

*«Զատիկ» մանկատան երեխաների կոչն ու խնդրանքն է երկրորդ անգամ չզրկել իրենց տնից, քանզի իրենք իրաւունք ունեն ապրել լիարժէք կեանքով, ստանալ կրթութիւն եւ դառնալ մեր երկրի արժանի քաղաքացի եւ, որ ամենակակարեւորն է, հոգատար ծնող՝ զերծ պահելով սեփական երեխաներին իրենց բաժին ընկած ճակատագրից:*

*Ծնող դառնալը առաջին հերթին մեծ պատասխանատուութիւն է, եւ մինչ այդ քայլին գնալը գիտակցիր՝ ինչ ապագայ ես կանխորոշում այդ անմեղ էակի համար, ով ամբողջ կեանքում ստիպուած կրում է մանկատան երախայի անունը, ով անվերջ անցորդների աչքերում որոնում է իր մօրը եւ երբեմն էլ տարիներ յետոյ նրան գտնելով՝ աւելի մեծ հիասթափութիւն է ապրում: Եւ ինչպէս ասացին հենց իրենք՝ աւելի լաւ է ապրես մանկատանը, քան նման մօր հետ:*

# ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 200-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԲԱՑՈՒՄ

*Մխիթարեան Միաբանութեան Վիեննա հաստատուելու 200-ամեայ (1811-2011) յոբելեանի առիթով Աւստրիական փոստը յատուկ դրոշմաթուղթ հրատարակեց, որուն ներկայացումը տեղի ունեցաւ Մայիս 12-ին, Մխիթարեան վանքի վերանորոգուած ճաշասրահին մէջ:*

*Այդ հանդիսութեան, որ յոբելինական տօնակատարութեանց բացումը եղաւ, պատուոյ հիւրերն էին Աւստրիայի պապական նուիրակ՝ Փեթեր Արքեպիսկոպոս Ցուրպրիկկըն, Կեդրոնական Եւրոպայի եւ Շուէտի Հայրապետական Պատուիրակ՝ Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան, Վիեննայի մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան՝ Աշոտ Յովակիմեան, Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէյճանի համար Աւստրիական դեսպան՝ Միխայէլ Փոսթըլ, Վիեննական փոստի տնօրէն՝ Վոլֆկանկ Լեսիաք, Հայ առաքելական եւ կաթողիկէ համայնքներու եւ միութիւններու ներկայացուցիչներ:*

*Հանդիսութեան բանախօսն էր Վիեննայի Մխիթարեան վանքի աբբահայր՝ Հ. Պօղոս Գոճանեան, որ Մխիթարեան Միաբանութեան եւ յատկապէս Վիեննայի վանքին պատմականը ըրաւ: Աբբահայրը շեշտեց հայ մշակոյթի եւ յատկապէս հայագիտութեան համար Միաբանութեան կատարած բացառիկ դերը, որուն իբր խորհրդանիշ? դրոշմաթուղթի վրայ պատկերուած էր Վանքի գրադարանէն չքեղ պահարան մը:*

*Այնուհետեւ Վիեննական փոստի տնօրէն՝ Վոլֆկանկ Լեսիաք ներկայացուց գեղեցիկ դրոշմաթուղթը երկու միլիոն տպաքանակով, որոնք «պիտի ցրուին ամբողջ աշխարհ՝ իբրեւ Մխիթարեան Միաբանութեան եւ հայ ազգի պատգամաւորները»:*

*Մէջընդմէջ Ջութակահարներ Անահիտ Մելիքեան եւ Լիլիթ Գրիգորեան նուագեցին հայ ժողովրդական երգեր:*

*Դրոշմաթուղթէն զատ ցուցադրուած էին նաեւ Հայաստանի կենտրոնական պանքի եւ Աւստրիական դրամատան կողմէ, նոյն յոբելինական առիթով, լոյս ընծայուած արծաթեայ յուշադրամներ, ինչպէս նաեւ սքանչելի նմանատիպ մը (փաքսիմիլ) Մխիթարեան վանքի շատ նուրբ մանրանկարներով մէկ ձեռագրէն:*

*Հանդիսութեան աւարտին կատարուեցաւ ընդունելութիւն հացիկներով:*

*Յոբելանական գլխաւոր տօնակատարութիւնը՝ ակադեմական հանդէս եւ հանդիսական սուրբ պատարագ՝ տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր 10-ին եւ 11-ին Վիեննայի մայր վանքին մէջ, իսկ Հոկտեմբերին՝ Երեւանի մէջ, նոյն յոբելեանը պիտի նշուի պետական մակարդակով:*

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

** Ամէն բան գեղեցկութիւն ունի, բայց ամէն մարդ չի տեսներ զայն:*
** Արժէքաւոր ուժականութիւնդ բամբասանքով մի վատներ:*
** Պայմանները որքան ալ լաւ կամ գէշ ըլլան, ամէն բան կը փոխուի:*
** Հպարտը կոյրին մէկ տեսակն է, որ իր թերութիւնները եւ ուրիշին լաւ կողմերը չի կրնար տեսնել:*
** Աւելի լաւ է, որ գիտուն մարդը քեզ լացնէ քան տգէտը խնդացնէ:*
** Խոնարհութիւնը մարդոց արժէքը կը բազմապատկէ:*
** Իմաստունը ան չէ որ սխալները չունի, այլ ան որ կը փորձէ իր սխալները չկրկնել:*
** Բաներ կան որ չես կրնար ընել մինչեւ որ սորվիս, իսկ բաներ ալ կան որ չես կրնար սորվիլ մինչեւ որ չընես:*
** Ամենէն սաստիկ ձմեռն անգամ ի վերջոյ կը նահանջէ գարնան առջեւ:*
** Կան շահեր, որոնք վնաս են իսկ կան վնասներ, որոնք շահ են:*





Թէքէեան Մշակութային Միութիւնը

Սիրով կը հրաւիրէ Ձեզ

**ԼՈՐԻ ԹԱԹՈՒԼԵԱՆԻ**

եւ իր խումբին՝

**THE BIG BAD ARMO SHOW**

երգիծական երեկոյին

**ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 25, 2011**
Երեկոյեան ժամը 7:30ին

**Թ.Մ.Մ. ՊԷՇԿԷՕԹԻՒՐԵԱՆ ԿԵԴՐՈՆ**
1901 North Allen Ave., Altadena

**ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ $50**
Ներառեալ ճաշ եւ Գինի

**Տոմսերուն համար հեռաձայնել**
**Վաչէ Սեմերճեանին 818-507-8010**
**Սիրան Օգնայեանին 626-564-9171**
**Մարալ Ղազարեանին 626-798-8010**

# ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԱՆՑԵԱԼԻ ՄԷՋ

Հայերը Պէնկալի նահանգին մէջ իբրեւ վաճառականներ աչքառու դիրք ունեցան Կալկաթայի հիմնարկութենէն շուրջ դար մը առաջ եւ աւելի կանուխ իսկ երբ դեռ Անգլիացիք չէին երեւցած Հնդիկներու աշխարհին մէջ: Կալկաթայի Պէնկալեան հնախօսական թանգարանին մէջ կը գտնուին Պեհարէն բերուած քանի մը հայկական տապանաքարեր, որոնցմէ մին 1646 թուականը կը կրէ:

Բենարէսէն եւ Թանայզն ապրանք կը ղրկէին անոնք Պէնկալի գլխաւոր քաղաքները, երբ այս երկրամասը Մոնկոլ տիրապետութեան ենթարկուեցաւ: Նշաններ կան թէ անոնք արուեստական փոքրիկ գաղութ մը ունէին Սուլթանատիի մէջ, մին այն երեք գիւղերէն, որոնց տեղը հիմնուեցաւ յետոյ Կալկաթան-հաւանաբար ասկէ է որ յետոյ Կալկաթայի հայոց ներկայ եկեղեցիին բակի գերեզմանատան մէջ փոխադրուեցաւ այն հայկական տապանաքարը, ուր կը կարդացուի 1630 թուականը, եւ զոր կը յիշէ Մեսրոպ Սէթ իր հնդկահայ պատմութեան մէջ: Ջինսուրայի-Ջիրամէջ, Հուկլիի ափին, տանըմարքացիներ երբ 1652ին իրենց կարեւորագոյն կայանը հաստատեցին, լայնօրէն վայելեցին գործակցութիւնը հայազգի վաճառականներուն, որոնք 1645էն ալ առաջ տեղաւորուած էին հոն, ուր 1695ին կառուցին առաջին հնդկահայ եկեղեցին:

Հաւանական է որ այսպէս 1599էն առաջ հայեր կային Պանտէլի մէջ, դարձեալ Հուկլիի ափերուն վրայ, ուր այդ թուականին բորթուկալցիներ ունէին իրենց առեւտրական կայանը: Իսկ 1651ին, երբ Անգլիացիք դիմեցին Շահ Ճիհան կայսեր, Պէնկալի մէջ գործելու արտօնութիւն խնդրելու համար, զանոնք կ'առաջնորդէր Սարհատ աղա հայ վաճառականը, եւ այդ դեսպանին յաջողութեամբ էր որ անգլիացիք հաստատուեցան այն տեղւոյն մէջ, ուր յետոյ հիմնեցին Կալկաթան:

Ակներեւ է ուրեմն որ, Անգլիացիք իրենց Պէնկալ մուտքի առաջին օրէն եւ յետոյ Կալկաթայի հիմնաւորման ատեն իրենց հետ ունեցան հայերուն սերտ գործակցութիւնը, որ արեւելեան Հնդկաց անգլիական ընկերութեան դրօշին տակ հետզհետէ աւելի ամրապնդուեցաւ քաղաքին եւ անգլիական գաղութին բարգաւաճման յաջորդ իրադարձութեան միջոցին եւս:

Նշանաւոր ծառայութիւններ մատուցին Ջուղայեցի երկու Պետրոսներ. մին Տէր Նիկողոսեան, վաճառական Մախտուաղատ, չափազանց յարգուած անձ մը հնդիկ արքունիքին մէջ եւ միւսը որդի Քալանթար Յարութիւնի, նոյնպէս անուանի վաճառական Կալկաթայի շրջակայքը: ԺԸ դարուն անոնք օգնութիւն մատուցին անգլիացիներուն, անոնց դժուարին օրերուն, Բլասէի ճակատամարտէն առաջ եւ յետոյ, մին իբրեւ բանագնաց հնդիկներու եւ անգլիացիներուն միջեւ եւ իբր միջնորդ կամ միջոց անգլիական յաջողութիւններուն եւ միւսը իբրեւ գաղտնապէս հոգածու անգլիացի փախստականներուն:

Այն փախստականներուն, որոնք Սարաճեւա Տէօլէի սարսափներէն խոյս տալով Կալկաթայէն քանի մը մղոն հեռու գետին բացերը իրենց նաւերուն մէջ ապաստանած մնացին աւելի քան վեց ամիսներ, մինչեւ Մատրասէն օգնութեան ժամանումը:

Թէ այդ միջոցին հայերը Կալկաթայի մէջ առեւտրական նշանակելի դիրք մը շինած էին, կը հասկցուի ինքնին այն իրողութենէն, որ այս պատերազմի աւարտին, երբ իբր փոխարինութիւն եղած աւերումներուն եւ կորուստներուն ընդհանուր հատուցում եղաւ, հայ վաճառականներուն եւս վիճակուեցաւ 70 հազար անգլիական ոսկի գումար մը: Տարակոյս չկայ թէ որքան զօրացաւ անգլիացիներու դիրքը Պէնկալի մէջ, զօրացան նաեւ հայերը, որոնք մինչեւ այն ատեն հոլանտացիներուն, ֆրանսացիներուն եւ բորթուկալցիներուն հետ էին Ջէնսուրայի, Ջանտէրնակօրի եւ Պանտէլի մէջ եւ կամ այլուր, Հնդկաստանի ուրիշ կողմերը: Անոնք սկսան հետզհետէ խմբուիլ անոնց շուրջ: Գաղութին ազգային կազմակերպութիւնը իր կանոնաւոր ձեւը ստացաւ 1724ին երբ Նազարէթ աղա անուն անձի մը առատաձեռնութեամբ կառուցուեցաւ Ս. Յովհաննէս Կարապետ քարաշէն եկեղեցին, այն տեղւոյն վրայ, որ աւելի քան 110 տարիներ առաջ հայոց գերեզման էր:

40 տարիներ վերջ 1763ին Աղա Յարութիւն Պետրոսեանի ծախքով կը շինուին այս եկեղեցիին երկու կողմի պահարանները կամ խորանները, ինչպէս իրենք կը կոչէն, մին աւազանատուն մկրտութեան եւ միւսը զգեստարան, որոնց առաջինին վերեւ, երկրորդ յարկի մը վրայ կը կառուցուի սեղան մը յանուն Պետրոս եւ Պօղոս Առաքեալներուն եւ միւսին վրայ նոյնպէս Լուսաւորիչի նուիրուած սեղան մը, երկուքն ալ պատարագամատոյց: Ինչպէս Ռանգունի եկեղեցիին մէջ, նոյնպէս այստեղ կը կառուցի մանուկներու մկրտութեան ոըմամէջի աւազանէն զատ, գետնի մէջ հաստատուած կճեայ մեծ աւազան մը չափահասներու համար, որ անշուշտ կը ծառայէր իբր մկրտարան հասակաւոր անձերու:

Աւելի յետոյ, երբ ժողովուրդը բազմացաւ, այդ երկու պահարաններու ուղղութեամբ եկեղեցին ընդարձակուեցաւ երկուստեք, երկայնքն ի վար: Ասոր ապացոյց են տաճարին երկու կողմի վրայ երեւցող տապանաքարերը:

Աւելի կանուխ 1734ին Ջուղայեցի Ղեւոնդի ճարտարապետութեամբ եւ Հազարմազ Մանուէլի ծախքով կառուցուած էր զանգակատան երկյարկանի քառուկիր աշտարակը, որ արեւմտեան մեծ դրան արտաքին կողմը կը կանգնէր, եկեղեցիին գրեթէ կրկին բարձրութեամբ, քառադէմ սեւագին ժամացոյցով եւ քառեակ զոյգ զանգակներովը, որոնց բամբ ձայնը կը թնդացնէր շրջակայ թաղերն ամբողջ, մինչեւ Հուկլիի ափունքը:

1790ին, Առաքել Խաչիկի առատաձեռնութեամբ եկեղեցին ներքնապէս կը զարդարուի, ամբողջ բակը կը շրջափակուի պարիսպով եւ կը շինուի քահանաներու միաբանական տունը:

Հաւանաբար այս միջոցներուն է նաեւ որ Ներսէս Յովհաննէսեան անուն վաճառականի մը նախաձեռնութեամբ կը շինուի նոյն գետին եզերքը-Հայկական Ջրլիցը-«Արմինիըն Կէյթ» ինչպէս հնդկահայեր կ'անուանեն զայն, ուր կ'երեւի թէ կ'արտածուէին եւ կը ներածուէին հայոց վաճառքները եւ որ բնականաբար անգործածելի է այժմ:

Կալկաթայի հիմնարկութենէն-1690-մինչեւ 1790, ամբողջ դարու մը տեւողութիւնը, այն շրջանն է ուր հայ գաղութը իր գոյութեան նիւթական եւ բարոյական հիմերը կ'ամրապնդէ, առեւտրական գործունէութեան փայլուն յաջողութիւններով եւ եկեղեցական կազմակերպութեան բարգաւաճ արդիւնքներով:

Փորձառու եւ փարթամ վաճառականներ, որոնք Սուրաթի եւ Սէյտապատի մէջ մանաւանդ իրենց դիրքը շինած էին, հետզհետէ կու գան հաստատուիլ Կալկաթա, իրենց հետ հոն փոխադրելով նաեւ հայ գաղութին տնտեսական եւ ազգային կեանքի կեդրոնը: Հնդկահայը,

Շար.ը էջ 19

AMERICAN RELIABLE WINDOWS




Beautify while increasing the value of your home with elegant,

18 months no interest* Financing O.A.C

ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

Our Windows Qualify For Tax Credits

www.americanreliablewindows.com

$89 Rebate* toward the price of new Vinyl Windows

Rebate Example:
5 windows= $445
10 windows= $890
15 windows= $1335



Manufacturers rebates & deep discounts available NOW. Product, Pricing and Financing to meet any Budget.

888-804-7250

Your Satisfaction is Guaranteed.

Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

# ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅ

## ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐԹԵՒՆԵՐԻ ԵՒ ՀՌՈՎՄԻ ԴԷՄ

Հայրենապաշտ Տիգրան Բ. Արքայ,
«Սուբարի-Միտանի-արմենական հին աւանդական հողերը իր պետութեան մէջ վերամիաւորող Ազգային Մեծ Գործիչ»

Մարտիրոս Գաւուքճեան

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Հայոց երկիրը շրջափակած պարթեւական ու հռովմէական աշխարհակալութիւնները, անմիջական սպառնալիք էին հանդիսանում հայոց պետութեան անվտանգութեանը: Նրան դէմ պայքարելու, երկիրը ամուր ու ազատ պահելու համար, Տիգրան Արքան կարճ ժամանակամիջոցում կազմաւորել էր, նոր զէնքերով, նոր մարտավարութեամբ հզօր բանակ 200 հազար հետեւակ, 55 հազար ծանր զրահաւորուած այրուձի, 35 հազար սակրաւոր:*

*Հայոց առասպելական Արքայ Տիգրան, պատմիչները պարծանքով հաւաստել էին նաեւ, որ նա կազմաւորել էր յիսուն բիւր (հինգ հարիւր հազար) բանակ, զինուորագրելով հայոց աշխարհի բնակիչներից տասից մէկին: Եւ աւելի քան երկու հազար տարի առաջ, Արինայի Սրբազան Լեռնաշխարհում հինգ միլիոն հայեր, կարող է... անշուշտ: Եւ երկու հազար տարիներ յետոյ... ի՞նչ եղեւ, ափսոս:*

*Հայկազուն Տիգրան Արքայ, հայոց պետութեան, հայոց մի նոր աշխարհակալութեան անվտանգութեան համար, դաշնակցել էր իր աներոջ՝ Միհրդատ Պոնտացի Թագաւորի հետ: Միհրդատ, արեւելքի քաջ զօրավար, առասպելական յանդուգն Թագաւոր, երդուեալ Թշնամի հռովմէացիների, որոնք արեւելք էին արշաւել կողոպտելու, տիրելու, Թալաներու, նրա մշակների արարած բարիքը, տանելու Հռովմ: Իրենց պետութիւնների սահմաններից նրան հեռու պահելու համար, միացեալ զօրաբանակներով գրաւել էին Կապադովկիան: Հանճարեղ, խորասոյզ, իմաստուն հայոց արքայ երեք հարիւր հազար Կապադովկիայի բնակիչներին ու ամբողջ շարժական գոյքը բերել էր երկիր, տարածքը Թողել Միհրդատի Պոնտոսի Թագաւորութեանը: Պատմիչները պիտի ասէին «Հայոց աշխարհում հող չմնաց անմշակ»:*

*Տիգրան Արքան չէր հանդուրժել պարթեւների արքունիքում պատանդ լինելու նուաստացումը: Պատերազմի էր նախապատրաստուել Պարթեւաստանի դէմ: Իր պետութեան Թիկունքը ապահովելու համար, երկրի հիւսիսում իրեն էր ենթարկել Իպերիան, Աղուանքը:*

*Պատերազմական յանդուգն գործողութիւններ ծաւալելով, գրաւել էր իր ազատման համար պարթեւներին զիջուած եօթանասուն հովիտների տարածքները, «Միջագետքն Հայոց», Կորդուքը, Հայաստանին յարող հարաւ արեւելեան երկրամասերը: Այնուհետեւ, դուրս էր մղել պարթեւներին՝ Օսրոենէ սահմանակից երկրի եւ այլ փոքր Թագաւորութիւնների տարածքներից, որոնք ընդունելով Տիգրանի գերիշխանութիւնը, վերածուել էին Հայաստանից կախեալ Թագաւորութիւնների: Մեծ Հայքին էր միացրել նաեւ Կոմմագէնէ հայկական Թագաւորութիւնը, որի Թագաւորը հայոց հին աստուածների համար սրբավայր էր արարած եղել Նեմրութի լերան գագաթին: Անտիոքի Թագաւորը, Հելլէն «Պոլիս»ների իշխանները, առանց կռուի ընդունել էին Տիգրան Արքայի հովանաւորութիւնը, զիջել Սելեւկեան պետութեան Թագը:*

*Արքան շարունակել էր արշաւանքները դէպի հարաւ: Պարթեւները չէին կանխատեսել, որ Տիգրան Արքայի յարձակումը կարող էր ընԹանալ ոչ իրենց կողմից ենթադրուած տարածքներից: Տիգրան Արքայի բանակը ռազմագիտական տարբեր նախաձեռնութիւն էր իրականացնելու: Նրա գլխաւորած հայկական զօրաբանակը հարաւային ուղղութիւնից շեղուել էր դէպի արեւելք, գրաւել Ատրպատականը:*

*Տիգրան Արքան ահեղ ճակատամարտ էր մղել պարթեւական հզօր բանակի դէմ: Հայկական ծանր սպառազէն այրուձին, մարտ վարելու Տիգրանի նոր ռազմավարութիւնը, վճռել էին ճակատամարտի ելքը: Պարտուել էր արեւելքի աշխարհակալ հզօր պետութեան բանակը: Պարթեւաստանը ստիպուել էր դաշնագիր կնքելու հայոց պետութեան հետ, հայոց Թագաւորին զիջելու պարթեւական Թագը ւ Արքայից Արքայ տիտղոսը կրելու իրաւունքը: Եւ այնուհետեւ Տիգրան Երկրորդ Թագաւորը հայոց աշխարհի՝ կոչուեց արեւելքի Արքայից Արքայ: Եւ նա պատմութիւն դարձաւ որպէս Արքաների Արքայ:*

*Առասպելական ռազմական տաղանդով Տիգրան հայոց Արքայի կազմաւորած տասնեակ բիւրերով սպառազէն հետեւակի ու այրուձիի հայոց քաջերի մարտունակ բանակը, Արմէն-հայերի Սրբազան Լեռնաշխարհի երկնակամար եկած աստղի լոյսը պիտի տանէր աշխարհներ:*

*Շատ կարճ ժամանակահատուած, տիրել էր մինչեւ Կովկասեան լեռներ, Կասպից ծովից այն կողմը՝ կեդրոնական Ասիա, հարաւ՝ մինչեւ տաք ծովեր, Կարմիր Ծով: Հեռու արեւմուտքի ծովի՝ Միջերկրականի ափեր, արեւմուտք մինչեւ Փոքր Ասիայի խորքեր, Կիլիկիա, որտեղից նաեւ հարիւր հազար բնակիչ տեղափոխել էր Հայքեր, ոչ Թէ որպէս ստրուկ, այլ աշխատող, հայոց երկրի դաշտերի հողը մշակող ռանչպարներ: Հրէաստանի Թագուհին էր մեծամեծ ընծաներով դիմաւորել հայոց Տիգրան Արքային, հպատակութիւն յայտնել, խնդրելով զինական արշաւանք չկատարել իր երկիր: Արքան ողջունել էր նրա առաջարկած խաղաղութեան բաղձանքը, կանգ էր առել հայոց զօրքի ջոկատների յաղթական երթը:*

*Հեռաւոր նախնիների, Հուրրի-Միտանիի, Արատտայի, Արմինա Արարատեան Թագաւորութեան արքաների ստեղծած աշխարհակալութիւնների նման, Տիգրան Արքայից Արքան եւս ստեղծել էր արմէն հայերի ծովերից ծով աշխարհակալութիւն ու դեռ շատ հեռու անդին: Աներեւակայելի տարածքով ընդարձակ տէրութիւն էր: Հայոց արքաները իրենց չէին աստուածացրել, չէին կողոպտել ենթակայ երկրներին, եղել էին իրենց մարդացած տիեզերական աստուածների նման բարեպաշտ:*

*Արեւելքի արքաները, ստրուկների արիւնաշաղախ քրտինքով էին պատել իրենց ոստանների պալատները: Եւ արեւելքում, երեւի միայն արմէն հայերի աշխարհում չի եղել ստրուկ մարդ, չի յափշտակուել մարդկանց աշխատանքի հեւքը: Մարդիկ այնտեղ ազատներ էին, իրենց արարած աշխատանքի արդիւնքից բաժին հանել նախարարին, մեհեաններին, տաճարներին, հարկ տուել իրենց Թագաւորին, որ իրենց երկրի բանակը զինի, կերակրի զինուորին:*

*Տիգրան Արքայից Արքան հանդիսացել էր ոչ միայն խոշոր ռազմագէտ, այլ նաեւ խոհուն դիւանագէտ, իմաստուն մտածող ու մշակուԹասէր: Պետութիւնը կայունացնելու նպատակով, ձեռնարկել էր ժամանակի առումով աննախադէպ ձեռնարկումներ: Ընդլայներ էր ենթակայ իշխանութիւնների աւագների կառավարման իրաւունքները, շնորհել հարկային նպաստաւոր պայմաններ, ապահովել առեւտրային ուղիների անվտանգ երթեւեկութիւնը: Նրան աւագանիների ձեռնհաս ներկայացուցիչներին ընդգրկել էր արքունիք: Իր ներհուն քաղաքական իմաստութեան շնորհիւ, ստեղծել էր արեւելքի քաղաքական ուժերը ընդգրկող դաշնակցային հիմունքներով կառավարուող աշխարհակալական հզօր տէրութիւն: Ահա այդ բոլոր միջոցառումների շնորհիւ էր կասեցուել Հռովմի ծաւալումը դէպի արեւելք, Թէկուզ ժամանակաւորապէս:*

*Արտաշատ մայր ոստանը աշխարհակալ տէրութեան կեդրոնական դիրք չէր գրաւել: Պետութեան կառավարման նոր կեդրոն ստեղծելու համար, Տիգրան Արքան կառուցել էր Տիգրանակերտ քաղաքը՝ հայոց օրրան Աղձնիք աշխարհում: Իմաստուն Արքան, հելլենական առաջաւոր մշակոյԹի տարածումն էր քաջալերել Հայաստան-Արմինա երկրում եւ իր նոր մայր ոստանում: Քաղաքում ամփիԹատրոններ էր հիմնադրել, որտեղ բեմադրուել էին Հելլէն իմաստունների Թատերական երկերը եւ նաեւ, ծագումով Հայ Թագուհու որդի՝ Արտաւազդի հեղինակած Թատրերգութիւնները: Արեւելքում, պետութեան կողմից հելլէնական մշակոյԹը հովանաւորող վերջին կեդրոնն էր լինելու Տիգրանակերտը: Հռովմը, Պարթեւաստանը, Պարսքը իրենց մշակոյԹն էին պարտադրելու արեւելքում:*

*Հայոց սրբազան լեռնաշխարհը «Աստուած»աստեղծ երկիր էր: Հարաւի ժողովուրդները նրան դրախտիկ երկիր էին անուանել: Նրա արքաները իրենց չէին աստուածացրել, պաշտամունք էին նուիրել լոյս պարգեւող արեգակին, մայրութեանը, հայրենի հողին, ծառին, ծաղիկին, իրենց լեռների լանջերից պայԹող աղբիւրների ջրին, քաջութեան խոյանքի ոգուն, գեղեցկութեան հմայքի հեշտանքին: Իրենց մարդացած աստուածների նման բարեպաշտ էին եղել: Ճամբեզրերին կանգնեցրած խրճիԹներին, Վանատուր աստուածը հիւրընկալել էր խոնջած անցորդներին, պատսպարել նրանց: Փրկութիւն չէին հայցել աներեւոյԹից, փառաբանել, պաշտամունք էին նուիրել իրենց ու իրենց աշխարհին բարիք տեղացող բնութեան երեւոյԹներին:*

*Հայ-Հուրրի Միտանի, Արատտայի, Արմինայի արքաների աշխարհակալութիւնները եւ ոչ էլ Տիգրան Արքայի աշխարհակալութիւնը կայսրութիւններ չէին բռնի ուժով կառավարելու, ստրկացնելու տիրակալած երկիրների ժողովուրդներին: Տիգրան արքան ստեղծել էր հսկայածաւալ տարածքով աշխարհակալ երկիր-պետութիւն, նոյնիսկ, մինչեւ հեռու Կարմիր Ծովի ափեր, Ասիայի մայր ցամաք, որտեղի ժողովուրդները պատմական Թէկուզ մի կարճ ժամանակի ընԹացքում ապրել էին ստեղծագործ խաղաղ աշխատանքով: Առանց իր իշխանութեան դէմ ընդվզման, Թոյլատրուել էր իրենց տիրոյԹներում իրականացնելու ներքին կառավարում: Մարդկային պատմութեան հոլովոյԹում եզակի առեղծուած չէ՞ արդեօք այս:*

*Միայն աշխարհագրական դիրքի համար չէ, որ Տիգրան Արքան, Արտաշատ մայր ոստանից բացի, մի նոր ոստան եւս էր ձեռնարկել կառուցելու: Հայոց սրբազան լեռնաշխարհի Մեծ ու Փոքր Հայքերի սրտում, Աղձնիք աշխարհում էր լինելու այն: Ազգային զգացմունքների մղումով ու ազգային աւանդութիւնների Թելադրանքով էր, որ որպէս արմենական մայր հող, որպէս հարազատ միջավայր, Աղձնիքում էր նոր մայր ոստան հիմնադրել եւ իր անունով Տիգրանակերտ անուանել: Այն, նաեւ ժամանակի հելլէնական մշակոյԹի շրջաններին աւելի մօտ էր լինելու:*

*Երկու ոստանների միջեւ կառուցել էր քարայատակ Արքայական ճանապարհը, որ այն իրար կապէր արեւելքի ու արեւմուտքի երկրները, այնտեղից ապահով անցնէին բեռներ տեղափոխող կարաւաններ: Դէպի Արտաշատ քաղաք տանող արքունի ճանապարհը ունեցել էր նաեւ ռազմագիտական նշանակութիւն՝ Մեծ Հայքի Արածանիի հովիտի պաշտպանական ամրութիւնների վրայ վերահսկողութիւն եւ իր զօրքերին տեղաշարժուելու հնարաւորութիւն ընձեռելու համար:*

*Արեւելքի փառահեղ քաղաք, շրջապատուած 25 մեԹր բարձրաբերձ հաստ պարիսպներով: Նրանց երկու կողմերում վաճառատներ, պահեստներ, զինանոցներ, այրուձիի ախոռներ էին գործել: Քաղաքի կեդրոնում, հզօր ամրութեան պաշտպանական կառոյցներով հսկայ միջնաբերդն էր: Այնտեղ էին բազմահազար զինուորներ: Նրանք հսկել էին քաղաքի անդորրութիւնը, ապահովել նրա անվտանգութիւնը: Հարիւր հազար բնակչութեամբ քաղաք, որոնց մի մասը եղել էին Ասորիներ եւ Միջագետքից, Փիւնիկէից, Ասորիքի «Պոլիս»ներից ժամանած յոյն վերաբնակներ:*

*Քաղաքից դուրս կառուցել էր արքայական պալատը: Սիւնազարդ որմերով ու կամարներով կառոյց, արարուած հայոց աշխարհի ժայԹքա՞ծ, Թէ՞ ծաղկած բազմագոյն քարերով: Արեւը, ծիածան քարերի լոյսը քաղում ու սփռում էր քաղաքի վրայ: Պալատի շուրջը, իրար վրայ յենած պուրակներում, հայոց լեռների լանջերի հազար գոյնի ալուան ծաղկունք, Սասուն լեռներից բերած սպիտակ գոյնով բրաբիոն խոշոր ծաղիկ:*

*Կախովի պարտէզներ չէին նրանք, հայոց հողի վրայ յառնած պարտէզներ էին, որտեղ Թագուհիները իրենց մանչերով ծաղիկի բուրմունքի խրախճանքով էին արբենում: Արայի արմենական ու պոնտացի զարմերից Թագուհիները, ծաղիկի պաշտամունքի հայոց տօներին, նրա պուրակներում քաղաքաբնակների հետ ծաղկունք հանդէսներ էին կատարում: Բոլորը դէպի վեր նետում էին ծաղիկներ, նայում Թէ արեւն ինչպէս էր ծիածան գրկած ժպտում իրենց:*

*Պալատի կողքի բլրակի վրայ,*

*Շար.ը էջ 19*

## 8 ՄԻՋՈՑՆԵՐ ՊԱՏԱՆԻԻՆ ՀԵՏ ՀԱՇՏ ՎԱՐՈՒԵԼՈՒ

*Տասնամեակներու ընթացքին, լաւ տանտիկին ըլլալու համար զանազան տեսակի խրատներ տրուած են: Այսօր հետեւեալ տողերուն մէջ կը ներկայացնենք կարգ մը խրատներ, ձեր պատանի զաւակներուն հետ հաշտ կերպով վարուելու առընչութեամբ:*

** Տան մէջ որդեգրուած օրէնքները սերտուած կերպով փոխանցէ ընտանիքի բոլոր անդամներուն: Կարելի է նաեւ թուղթի մը վրայ արձանագրել զանոնք եւ այդ թուղթը կախել խոհանոցը տեղ մը, որպէսզի յիշելու հարկ եղած պարագային, կարելի ըլլայ անոր դիմել:*

** Այն ծնողները, որոնք կը մերժեն իրենց զաւակներուն անկիրթ վերաբերմունքը հանդուրժելու արարքին տեղի տալ, շատ հաւանական է որ ի վերջոյ ունենան ոչ անկիրթ զաւակներ:*

** Հարցումներ հարցուր, փոխանակ լուծումներ հրահանգելու: Օրինակի համար, փորձէ ըսել. «Կը կարծե՞ս, թէ գիտութեան նիւթին պահանջուած աշխատանքը կը կարենաս ամբողջացնել երկու օրուան մէջ», փոխանակ ըսելու. «Գիտութեան աշխատանքը հիմա պէտք է որ սկսիս, որպէսզի կարենաս ամբողջացնել»: Հարցում հարցնելը կը քաջալերէ զաւակիդ՝ ինքն իր կարողութեան մասին մտածելու եւ անոր կու տայ այն զգացումը, թէ դուն կը վստահիս իրեն:*

** Փորձէ «համագործակցութեան» մօտեցումը: Բացատրէ մտահոգութիւնդ հետեւեալ ձեւով. «Կը զգամ թէ վերջերս բաւական լարուած վիճակ մը ունիս եւ կարծես դժուար պահեր կ'ունենաս: Ինչպէ՞ս կը կարծես, որ աւելի հանդարտ կրնաս ըլլալ»: Թոյլ տուր, որ ան իր առաջարկները տայ, եթէ չյաջողին, այն ժամանակ քուկիններդ առաջարկէ:*

** Պաշտօնական «հո'ս եկուր, խօսելիք ունինք» արտայայտութիւնը գործնական չէ ընդհանրապէս ներկայ ժամանակներուն մէջ: Անոր փոխարէն, ուշադրութեամբ հետեւիր երբ պզտիկները խօսելու տրամադիր վիճակի մէջ կ'ըլլան եւ այն ժամանակ առիթը օգտագործէ զինք լսելու եւ իրեն փոխանցելիքներդ ըսելու: Այս ժամանակը կը տարբերի իւրաքանչիւր պզտիկի մօտ. մէկը կրնայ դպրոցէն վերադարձին խօսիլ, իսկ միւսը՝ քնանալէ առաջ:*

** Պատանիներ, որոշ տարիքի մէջ, մեծ մարմաջ կ'ունենան աշխատելու: Այսպիսի տարիքի մէջ, անոնց քաջալերելը պատասխանատուութիւն է: Արդարեւ, անհրաժեշտութեան պարագային, օգնէ' իրեն՝ զինք հեռու պահելով այնպիսի աշխատավայրերէ, ուր վտանգաւոր տեսակի մրցակցութեան մէջ կրնայ մտնել փորձառու մարդոց հետ: Կարելի է յանձնարարել, որ ան աշխատի տեղ մը, որ օտար չէ իրեն համար եւ միջավայրը ծանօթ է իրեն, ինչպէս օրինակի համար եթէ ան արուեստի դպրոց մը կամ մարզանքի ակումբ մը յաճախած է, ուր այժմ օգնականի պէտք ունին:*

** Գործի դիմում ներկայացնելու ժամանակ, օգնէ իրեն իր resume-ն լաւապէս պատրաստելու եւ գործատէրին հետ տեսակցութեան համար լաւ ձեւով ներկայանալու համար:*

** Քաջալերէ անոր, որ իր տաղանդներն ու հետաքրքրութիւնները ճիշդ ձեւով արտայայտէ եւ պէտք եղած ժամանակ օգտակար դառնայ ուրիշներուն: Այսինքն, եթէ ան համակարգիչի մէջ լաւատեղեակ է, դրացիներուն կրնայ օգտակար դառնալ պէտք եղած պարագային: Եթէ տնային կենդանիները կը սիրէ, կրնայ կամաւոր աշխատանք տանիլ տնային կենդանիներ խնամող հաստատութեան մը մէջ:*

## ԱՐՀԻԱՊԱՏԻՒ ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

***Շարունակուածէջ 1-էն***

*եկեղեցւոյ: 1991ին՝ փոխժողովրդապետ Սուրբ Խաչ Եկեղեցւոյ, Զալքա, Լիբանան: 1992էն 2001՝ եղած է ժողովրդապետ Հայաստանի Շիրակ եւ Լոռի մարզերու զանազան գիւղերուն մէջ: 1995էն 2001՝ ընդհանուր քարտուղար եւ գործադիր տնօրէն Հայաստանի Caritas բարեսիրական կազմակերպութեան: 2000ի Հոկտեմբերին ստացած է Պատուակալ փրոֆէսորի կոչումը Հայաստանի հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութեան Մ. Նալպանտեան անուան պետական մանկավարժական համալսարանէն:*

*Լիբանան վերադարձին, 2001էն 2004, Հայր Միքայէլ կը կարգուի ժողովրդապետ Էշրէֆիէյի Սրբոյ Կուսին Աւետման եկեղեցւոյ, ապա հոգեւոր հայր Զմմառու ընծայարանին եւ հոգեւոր վարիչ պատրիարքական թեմի երիտասարդաց յանձնախումբին: Նոյն տարիներուն եղած է նաեւ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Աւետիք պաշտօնաթերթի խմբագրական կազմի անդամ:*

*2005էն 2007, Գերյ. Միքայէլ Ծ. Վ. Մուրատեան եղած է Մեծաւոր Հռոմի Լեւոնեան Քահանայապետական Վարժարանին, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան գործակալ՝ Սուրբ Աթոռին մօտ, Վատիկան:*

*2007ի Սեպտեմբերին Գերյ. Միքայէլ Թ. Ծ. Վ. Մուրատեան ընտրուած է Պատրիարքական փոխանորդ Զմմառեան Կաթողիկոսական Միաբանութեան եւ Մեծաւոր Զմմառու Մայրավանքին, մինչեւ իր ընտրութիւնը իբր Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայոց, այս տարուայ Մայիս 20ին:*

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք
հայերէն գիրքեր,
եւ կը ցանկաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

## ՎՍՏԱՀԻՐ ՔՈՒ ԱՆՁԻԴ ԵՒ ՔԱԼԷ ԹԱԳԱՒՈՐԻ ՆՄԱՆ

*Կեանքիդ մէջ ինքզինք արժեւորելու հասկացողութիւնը նոր ընթացք առած է: Դպրոցները կը քաջալերեն ուսանողները՝ իրենց ինքնավստահութիւնը զօրացնելու, ինչպէս նաեւ կարգ մը համաշխարհային հաստատութիւններ միջոցներ կը ստեղծեն, որոնց նպատակն է իրենց պաշտօնեաներուն վստահութիւնը բարձրացնել՝ հանդէպ իրենց կարողութիւններուն:*

*Այս հասկացողութիւնը բնաւ չի բացակայիր իւրաքանչիւր անհատի առօրեայ կեանքէն. քանի՞ անգամներ վիճաբանած ենք մեր ազգականներուն կամ բարեկամներուն հետ, պարզապէս որովհետեւ անոնք քաջալերական խօսք չեն ըսած մեզի, երբ մենք պէտք ունինք անոր: Քանի՞ անգամներ մեր հոգերն ու մտավախութիւնները մեր կեանքէն անզգալաբար փոխադրած ենք դէպի ուրիշներ:*

*Արդարեւ, այս հասկացողութեան հետ մեր յարաբերութիւնը առօրեայ է, որովհետեւ ինքնավստահութեան գործողութիւնը մենք կը դիմակալենք ամէն տեղ եւ ամէնատեն, որմէ փախուստ տալը գրեթէ անկարելի է, որովհետեւ այդ մեր մէջ կը գտնուի, կ'ուրախացնէ, կը լացնէ, կը մեռցնէ ու կ'ապրեցնէ մեզի:*

*«Խօսիր անձիդ մասին»: Դժուար է պատասխանել այս հարցումին, կարծես մեզմէ պահանջուած ըլլայ մեր ամբողջ պատմութիւնը կրճատել երկու բառերու մէջ:Սակայն այս հարցին մէջ ծիծաղելին այն է, թէ ճիշդ այս հարցումով կը սկսի ինքնավստահութեան խաղը:*

*Իրականութեան մէջ, ուրիշին կողմէ արտացոլուած մեր պատկերը կարեւոր դեր կը խաղայ մենք մեր անձը արժեւորելու մէջ, որովհետեւ այդ կը միտի յագեցնել երկու գլխաւոր պէտքեր. առաջինը, սիրուած ըլլալու զգացումը, իսկ երկրորդը՝ արարք մը կատարելու մեր կարողութիւնը կը զգացնէ մեզի:*

*Զգացական կեանքի մէջ սիրուած չըլլալու վախը կը պակսեցնէ մեր ինքնավստահութիւնը, ինչպէս նաեւ մենք միշտ պէտք ունինք, որ ուրիշը մեզի վստահեցնէ մեր անձին հանդէպ մեր սէրը: Այս վախը մեզմէ շատերը կը մղէ ուրիշին հանդէպ որեւէ քայլ կատարելու արարքէն խուսափելու: Կը գտնուին մարդիկ, որոնք չեն համարձակիր իրենց սիրած անձին անկեղծօրէն յայտնելու իրեն հանդէպ ունեցած սիրոյ զգացումները, որովհետեւ ժխտական հաւանականութեան մասին մտածումը միայն վախ կը պատճառէ անոնց:*

*Մասնագէտ հոգեբաններ, իրենց անձին այսպիսի իրաւունք չտուող երիտասարդներուն մօտ կը տեսնեն «ինքն իր անձին հանդէպ սիրոյ» պակաս: Երիտասարդները ինչպէ՞ս ուրիշներէն կրնան խնդրել որ սիրեն իրենց, եթէ իրենք անձամբ կասկած ունին իրենց անձին հանդէպ: Այս կասկածին պատճառները կը տարբերին ըստ իւրաքանչիւր անհատի ունեցած փորձառութիւններուն. այդ պատճառներէն մէկը կրնայ ըլլալ հարցերով լեցուն ընտանեկան պատմութիւն կամ կրնայ ուղղակիօրէն կապ ունենալ զգացական ձախող փորձառութիւններու հետ, հասնելով մինչեւ ինքզինք ատելու աստիճանին: Ուրեմն, այսպիսի պայմաններ ունեցող անձ մը ինչպէ՞ս կրնայ սէր տալ երբ մոռցած է «սիրէ ուրիշը անձիդ պէս» խօսքը:*

*Ուրիշներուն մօտենալու վախին փոխարէն, կարգ մը մարդիկ կը դիմեն տարբեր ձեւերու, որոնք կը կրճատուին ուրիշը հրապուրելու եւ գոհացնելու մէջ, վստահ ըլլալու համար, թէ իրենք տակաւին պահանջուած մարդիկն են: Իրականութեան մէջ, սէր ստանալու եւ տալու համար, մեզմէ իւրաքանչիւրը պէտք ունի թէկուզ քիչ մը ինքզինք սիրելու եւ ինքն իր անձին վստահելու, ապա ուրիշին դերը կը կայանայ այդ սէրը զարգացնելու մէջ:*

*Միւս կողմէ, գործի մէջ յաջողիլն ու չարունակելը կապուած են անձին ինքնավստահութիւն պահելու կարողութենէն, մանաւանդ նեղ պարագաներու ընթացքին, երբ անձը յոգնած կը զգայ եւ պէտք կ'ունենայ, որ ուրիշները գնահատեն իր կատարած աշխատանքը: Այս յարաբերութիւնը, որ իրար կը կապէ ինքնավստահութիւնն ու գործը, երբեմն նոյնիսկ կը հասնի անհատին արժէքը իր արձանագրած յաջողութիւններուն հետ առնչելու աստիճանին:*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

- - - - - - - - - - - - - - - - - - - -

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 for USA**

*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**

*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ------------------------------------------**

**Address: ------------------------------------------**

**City: --------- State:--------- Zip Code:------**

**Country: -------------**

**Tel :----------------------- Fax : ------------------------**

# ԿԱԿԱՉԸ՝ ՍԻՐՈՅ, ՅԱՒԵՐԺՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

**ՋՈՒԼԻԵՏԱ ՍԱՀԱԿԵԱՆ**

*Պարսկական մշակոյթում կարմիր կակաչը համարւում է սիրոյ եւ սիրահարուածի յաւերժական ծաղիկ: Բնութեան մէջ աճում են կակաչի բազմաթիւ տեսակներ, սակայն դրանց մէջ չկայ կակաչ քնաբերը (Papaver somniferum): Այն մշակուել է մարդու կողմից P. Setigerum բնական տեսակից: Փոքր Ասիայում կակաչի սերմերի իւղն օգտագործուել է դեռեւս քարէ դարում: Կակաչի մշակովի տեսակների հայրենիքն է ներկայիս Եգիպտոսի, Արաբիայի, Իտալիայի տարածքը մ.թ.ա 1000 թուին: Դէպի Հնդկաստան եւ Չինաստան կակաչ մշակովին տարածուել է իններորդ դարում: Նկարագրելով կակաչ քնաբերը՝ Ա. Ամասիացին գրում է. «Աստծոյ օրհնութիւնը կը լինի նրա հետ, որ սովորութիւն չի դարձնի ափիոնի (մեկանի) օգտագործումը»: Բազմաթիւ երկրներում մեկանի ցանքատարածքները սահմանափակուած են իշխանութիւնների կողմից, դրանից ստանում են սննդի մէջ օգտագործուող բուսական իւղ, ներկաիւղ (օլիֆ), հասունացած սերմերը եփած վիճակում օգտագործում են հացաբուլկեղէնի արտադրութեան մէջ, խառնում տարբեր համեմունքներին:*

*Բոյսի մեկան հայերէն անուանումը շատ մօտ է յունարէն «mekon» կամ «makon» անուանումներին: Նոյն արմատից է առաջացել նաեւ գերմաներէն «Mohn» անուանումը:*



*Ուշագրաւ է, որ «մեկան» բառը կարելի է ստուգաբանել՝ որպէս բազմաքայլ, մէկ՝ միակ, եւ անպտուղ, այսինքն՝ մէկ ծնունդ, մէկ պտուղ: Սա ճիշտ է, քանի որ կակաչի ծաղիկը միշտ մէկն է եւ նստած է ցօղունի գագաթին: Ըստ Լ.Վ. Յարութիւնեանի (Քո շրջապատի ծաղիկները)՝ Շիրակի դաշտում, Արագածի լանջերին, Լոռիում, Նիգ-Ապարանում, Սեւանի աւազանում, Արարատեան դաշտի նախալեռնային գօտում, Վայքում, միջին եւ վերին լեռնային գօտիների քարքարոտ լանջերում եւ թփուտներում հանդիպում է papaver orientale տեսակը, որի հայրենիքը Պատմական Հայաստանն է:*

*Կակաչազգիների ընտանիքի papaver անուանումն առաջացել է կելտական Papa-շիլա բառից: Այս արմատին համահունչ են անգլերէն Pappy եւ ֆրանսերէն Pavot անուանումները:*

*Կակաչ ինքնացանը՝ papaver rhoeas սիրուած է բոլոր ժողովուրդների կողմից: Երգահան Ռ.Մ. Գլիէրի (ծնուած 1875թ. Կիեւում) «Կարմիր կակաչ» բալետում (գրած 1926թ.) ծաղիկն ազատութեան խորհրդանիշ է: Ի դէպ, 1949թ. ստեղծագործութիւնը վերանուանուել է «Կարմիր ծաղիկ»: Բոյսի հետ կապուած են բազմաթիւ աւանդազրոյցներ եւ սովորոյթներ: Ամանորից առաջ աղջիկները կակաչի սերմեր էին լցնում ծոցի մէջ, առանձնանում եւ հաշւում սերմերի քանակը: Համարւում էր, որ աղջիկը կ՚ունենայ մնացած սերմերի քանակին համապատասխան երկրպագուներ:*

*Բոյսի հայերէն անուանումներն են՝ հարսնածաղիկ, հարսնուկ, նորահարսնուկ, խաթունիկ, պուտպուտ:*

*Մասնագիտութեամբ զինուորական բժիշկ գանատացի Ճոն Մակ-Կրոն մի բանաստեղծութիւն է գրել կակաչի մասին, որը նուիրել է Առաջին համաշխարհային պատերազմում զոհուած իր ընկերոջ յիշատակին: ԱՄՆ-ում եւ եւրոպական մի շարք երկրներում Նոյեմբերի 11-ը նշւում է որպէս պատերազմում զոհուած անձանց յիշատակի օր: Նոյեմբերի 4-11-ը կրում են կակաչի արհեստական կրկնօրինակները: Կակաչը պատկերուած է գանատական $10-ի (2001թ.) եւ 25 ցենտի վրայ (2004թ. եւ 2008թ.): Ռումինական թղթադրամի վրայ (200 լէյ):*

*Կակաչ ինքնացանը երկշաքիլաւոր միամեայ կամ ձմեռող մոլախոտ է:*

*Արմատը ճիւղաւորուած է, բազմաթիւ արմատամազիկներով պատուած: Ցօղունը ուղղականգուն է, վերին մասում թեքուող մինչեւ 40 սմ բարձրութեամբ, ծածկուած է գեղձամազերով, երբեմն մերկ է: Տալիս է մի քանի կարճ կողային ճիւղաւորումներ: Տերեւները փետրաձեւ հատուած են, ցօղունը եւ տերեւները ունեն կանաչաւուն կամ մուգ գորշաւուն երանգաւորում: Ծաղիկները խոշոր են՝ 3-5 սմ տրամագծով, երկսեռ, մէկական՝ հիմնուած ցօղունի կամ կողային ճիւղերի գագաթներին: Ծաղկաթերթերն ալ կարմիր են, փայլուն, սեւ հիմնամասով: Ծաղկում է Մայիս-Յունիս ամիսներին: Պտուղը գմբէթաւորուած տուփիկ է, հասունանալուց յետոյ սերմերը դուրս են թափւում տուփիկից, տարածւում հողի բուսամերձ տարածքում:*

*Հայաստանում կակաչ ինքնացանն աճում է ցածրադիր գօտուց մինչեւ 2000մ բարձրութեան վրայ: Պատմականօրէն աճել է անմշակ տարածութիւններում, վերջին 50 տարիների ընթացքում յայտնւում է նաեւ մշակովի տարածքներում՝ ինքնացան եղանակով, գրաւելով մեծ տարածքներ:*

*Բոյսի ծաղկաթերթերը պարունակում են մինչեւ 0,05 տոկոս ալկալոիդներ, ասկորբինաթթու, ներկանիւթեր, լորձ, պեկտին, խեժանիւթ, երկաթի եւ մագնիումի աղեր: Տուփիկների մէջ յայտնաբերուած են ճարպեր, մօտ մէկ տասնեակ ալկալոիդներ: Հետաքրքիր է իմանալ, որ ինքնացան եւ մշակովի տեսակների մէջ պարունակուող ալկալոիդները տարբեր են: Կակաչ ինքնացանից պատրաստուկները հանգստացնում են նեարդային համակարգը, ունեն քնաբեր, փափկեցնող, խորխաբեր, արիւնարգել յատկութիւն:*

*Բազմաթիւ հետազօտութիւններով ապացուցուել է, որ բոյսի ոգեթուրմն ունի հակաուռուցքային ազդեցութիւն:*

*Կարեւոր է պահպանել դեղատոմսերում նշուած չափաբաժինները եւ օգտագործման ժամկէտները:*

*Դեղատոմսեր կակաչ ինքնացանով*

*Բարձր քրտնարտադրութեան դէպքում. խառնէք կակաչի չորացրած ծաղկաթերթերը (1:1) մեղրի հետ եւ կերէք:*

*Մէկ ամիս օգտագործելուց յետոյ ընդմիջէք 10 օր:*

*Մտաւոր գերյոգնածութեան եւ անքնութեան դէպքում.*

*10 գրամ չոր ծաղիկների վրայ լցրէք 0,5 լ օղի: Թրմէք մութ տեղում, պահէք 2 շաբաթ: Պարբերաբար թափահարէք:*

*Ընդունէք 10-15 կաթիլ (50 մլ ջրով), քնելուց կէս ժամ առաջ: Երկու շաբաթ օգտագործելուց յետոյ ընդմիջէք մէկ շաբաթ:*

*Մոծակի, մլակի խայթոցի դէպքում. տրորէք թարմ կակաչի գլխիկները, տեղադրէք վէրքի վրայ:*

*Արտաքին վէրքերի դէպքում. չորացրած ծաղկաթերթերի փոշին օգտագործէք որպէս արիւնարգել միջոց:*

# ԳԻՏԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԷՅԻ ՄԱՍԻՆ



*Նախաճաշի ընթացքին թէ՞յ կը խմէք, թէ սուրճ: Ըստ կարգ մը ուսումնասիրութիւններու, թէյը մեր առօրեայ կեանքին մէջ ջուրէն յետոյ ամենէն շատ սպառուող խմիչքն է: Ահաւասիկ ճիշդ թէ սխալ դատումներէ բաղկացած իրողութիւններու շարք մը, անոր մասին:*

*Թէյը պտուղներէ եւ բանջարեղէններէ աւելի շատ ֆլավոնոիտ կը պարունակէ իր բաղադրութեան մէջ Ճիշդ, թէյի չորցուած տերեւներուն մէկ երրորդը ֆլավոնոտիէ կը բաղկանայ, այս վերջինը այն քիմիական նիւթն է որ բջիջներուն երկարակեցութիւնը կ՚ապահովէ: Այս ուղղութեամբ միմիայն ելակն է որ կը գերազանցէ թէյը: Հազիւ չորս վայրկեանոց հեղումէ մը յետոյ, այս բարերար քիմիական նիւթերուն 80 տոկոսը արդէն ազատ կ՚արձակուի թէյին մէջ: Հիւսիսային Եւրոպայի մէջ սնունդներուն պարունակած ֆլավոնոյիտներու 60 տոկոսէն աւելին թէյ սպառումին շնորհիւ կ՚իրագործուի: Երկրորդ գիծի վրայ կու գայ միմիայն 13 տոկոսով, սոխը, խնձորը, խաղողը եւ միւս պտուղներն ու բանջարեղէնները կ՚ամբողջացնեն մնացեալը:*

*Ճաշի ընթացքին թէյի չափազանցուած սպառումը անարիւնութեան պատճառ կրնայ ըլլալ:*

*Ճիշդ. ճաշի ընթացքին խմուած թէյը սնունդներու 1էն 20 տոկոսը պարունակած երկաթի իւրացումին արգելք կ՚ըլլայ, մինչդեռ «ծէ» կենսանիւթը կը դիւրացնէ երկաթին ծծումը: Այսպէսով ճաշի ընթացքին թէյի կանոնաւոր սպառումը մանաւանդ բանջարեղէններու, յղի կիներու եւ երախաներու մօտ երկաթի պահեստը կը տկարացնէ մինչեւ անարիւնութեան հասցնելով ենթական: Այս անպատեհութեան առաջքն առնելու միակ միջոցը՝ ժամերու միջեւ թէյ խմելու մէջ կը կայանայ:*

*Թէյը որկորի քաղցկեղի կրնայ պատճառ ըլլալ:*

*Սխալ. ինքնին՝ թէյը չէ որ քաղցկեղի պատճառ կրնայ ըլլալ, այլ խմուած ջերմաստիճանը: 55 աստիճանէն վեր թէյը կրնայ խռչափողը գրգռել, այսպէսով քաղցկեղի վտանգը կրնայ բազմապատկել: Իրականութեան մէջ թէյ սիրողները ընդհակառակը, որոշ քաղցկեղի տեսակներու դէմ (ինչպիսին են բերնի, մարսողական գեղձի, հաստ աղիքի, շագանակագեղձի եւ կանանց մօտ միզապարկի քաղցկեղները) պաշտպանուած են 60 տոկոսով:*

*Թէյը քոլեսթերոլը կը նուազեցնէ*

*Ճիշդ. Թէյի սիրահարները ընդհանուր առմամբ քոլեսթերոլի աւելի ցած մակարդակ մը կը ցուցաբերեն բաղդատմամբ այն անձերուն որոնք հազուադէպօրէն թէյ կը խմեն: Մարդոց մօտ նշմարուած այս երեւոյթը ստուգուած է նաեւ մուկերու մօտ թէյը այս վերջիններուն ոչ միայն քոլեսթերոլը այլ նաեւ արեան ճնշումը կը պակսեցնէ: Այս երեւոյթին գիտական բացատրութիւնը այն է որ ֆլավոնոտիները «վատորակ քոլեսթերոլ»ին օքսիտացումին արգելք կը հանդիսանան, գործընթաց մը որ սրտի տագնապին ծայր տուող երակային խցումին գլխաւոր պատասխանատուն կը նկատուի: Մօտ տասը հազար անձերու վրայ Նորվեկիոյ մէջ կատարուած ուսումնասիրութիւն մը երեւան հանած է որ օրական մէկ կամ աւելի թէյ խմողները թէյ չխմողներու բաղդատմամբ 40 տոկոսով նուազ սրտերակային ախտերու ենթակայ են:*

*Թէյը քաֆէին չի պարունակեր*

*Սխալ. Թէյին գործօն քիմիական նիւթը «թէյին» կը կոչուի որ ուրիշ բան չէ եթէ ոչ քաֆէինին քիմիական մէկ տարբերակը: Գաւաթ մը թէյը միջին հաշուով 40 միլիկրամ թէյին կը պարունակէ բաղդատած գաւաթ մը սուրճին պարունակած 150 միլիկրամին: Անկէ դուրս, թէյը կը խթանէ, իսկ սուրճը ջիղերը կը գրգռէ:*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌՒԴԻԴ ԵԹԵՐ ՇՕ**
**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի**
**380-րդ կայանից**

## ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԱՆՑԵԱԼԻ ՄԷՋ

*Շարունակուած էջ 15-էն*

*ինչպէս Մատրասի մէջ, նոյնպէս եւ հոս կրցաւ օգտուիլ այս պատեհութենէն, իր կրթական կեանքին տալու համար իմացական շարժումի այն շունչը, որ պահանջն էր որքան իր արեան բնազդին, նոյնքան նաեւ իր ցեղական դիրքին, կրթուած ժողովուրդի մը հետ առժամապէս եւ յաջողութեամբ գործակցիլ կարենալու հարկին:*

*Կանուխէն, այսինքն 1757էն ալ առաջ, Կալկաթայի մէջ կար արդէն հայ դպրոց մը: Կը յիշուի թէ հրամանատար Մարգար, որ Պէնկալի Նուապպին զօրավարներէն էր, իր ազգին տղոց համար կը պահէր առանձին դպրատուն մը: Իրմէ վերջ կը յիշուի Յարութիւն Գալուցեան Եւդոկեացին, որ 25 տարիներ քառորդ դար մը ամբողջ, շարունակեց հոն մասնաւոր ուսումնարան մը: Բայց հնդկահայոց կրթական վերածննդեան գաղափարին բուն երկնողի մը փառքը վերապահուած էր Աստուածատուր Մուրատխանեան Ջուղայեցիին: Այս անձն էր որ 30 Յուլիս 1797ին, ազնուական մտածումը ունեցաւ ազգին կտակելու կարեւոր գումար մը -8000ր.- Հնդկաստանի հայութեան համար ազգային կրթարան մը բանալու նպատակաւ:*

*Իր վերահաս մահուան պատճառաւ սակայն անկատար կը մնայ իր իղձը, ու 1816ին Մնացական Սմբատ Վարդանեան, Սէյտապատի Ջուղայեցի ազգասէր վաճառական մը քաջութիւնը կ'ունենայ մոռցուած, գրեթէ մեռեալ նպատակ մը կենդանացնելու աշխատանքին լծուելու:*

*Նախ «Հրաւիրակ» խորագրով գրութեամբ մը, յետոյ անձամբ դիմում կ'ընէ հնդկահայութեան, վերանորոգելու Մուրատխանեանի կտակը, ու մեծ ջանքերէ վերջ կը յաջողի վերջապէս մարմին տալ ընդհանուր փափաքին, 2 Ապրիլ 1821ին կը հիմնէ ճեմարանը, ուր Յարութիւն Գալուցեանէ վերջ, իբր գլխաւոր ուսուցիչ հետզհետէ կը պաշտօնավարեն Յովհաննէս Յարութիւնեան, Իսահակ Ազնաւուրեան, Մարտիրոս Դաւթեանց, Մելիք Բէգլաբէրեան եւ այլն:*

## ԼԱ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՈՒԱԳԱԽՄԲԻ

*Շարունակուած էջ 8-էն*

*րից, հայկական ազգային պարարուեստ՝ Վարդան եւ Սիրանոյշ Գէորգեաններ պարային ստուդիայի սաների կողմից եւ հայկական ժամանակակից ջազային երաժշտութիւն՝ Արտօ Թունջբոյաճեանի կատարմամբ:*

*որով այսօր ներկայացուած է հայկական երաժշտութիւնը, արտացոլում է մեր ինքնութիւնն ու հազարամեայ մշակոյթը: Յուսով ենք՝ պարահանդէսը լոսանճելըսցիներին հնարաւորութիւն կ'ընձեռի առաւել լաւ ճանաչել Հայաստանն ու հայ մշակոյթը» -նշել է Լոս Անճելըսում ՀՀ գլխաւոր հիւպատոս*



*Յուցադրուել է Հայաստանի մշակութային, պատմական կոթողներն ու տուրիստական վայրերը ներկայացնող ֆիլմ:*

*Յատուկ պարահանդէսին մասնակցելու նպատակով ԼԱ է ժամանել Նիւ Եորքի Մետրոպոլիտեն օպերայի բարիտոն Վլադիմիր Ջեռնովը, որը կատարել է Յան Քրուգի «4 նոկտիւրնը»՝ գրուած Մ. Մեծարենցի, Վ. Տէրեանի եւ Գ. Մահարու ստեղծագործութիւնների հիման վրայ:*

*«Հպարտ ենք ներկայացուած լինել այս իրապէս բարձրաճաշակ երեկոյին, որը բազմամշակութային քաղաքի խոշորագոյն իրադարձութիւններից մէկն է: «Յաւերժութեան մեղեդի» խորագիրը, Գրիգոր Յովհաննիսեանը:*

*Հայաստանի անկախութեան 20-ամեակին նուիրուած պարահանդէսը ողջունել է նաեւ ԼԱ Ֆիլհարմոնիկի ղեկավար՝ աշխարհահռչակ Գուստաւօ Դուդամելը: Նա ընդգծել է, որ խոշորագոյն մշակութային միջոցառման հասոյթը կ'ուղղուի կրթական ծրագրերի իրականացմանը:*

*Պարահանդէսին մասնակցել են աւելի քան 400 երաժշտասէրներ, այդ թւում եւ՝տասնեակ երկրների դիւանագէտներ:*

*ԼԱ Ֆիլհարմոնիկ նուագախմբի պարահանդէսի ընթացքում յայտարարուել է Լոս Անճելըսում ՀՀ անկախութեան 20 ամեակին նուիրուած միջոցառումների մեկնարկը:*

## ԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԻԳՐԱՆ ԱՐՔԱՅ

*Շարունակուած էջ 16-էն*

*քարակոփ աստիճաններով բարձրացող հայոց աստուածների մեհեան էին կառուցել: Նրա շուրջ բոլորը, հայոց աշխարհի մրգերի ծառեր, որտեղ ամրանը արեւն էր իջնում ծիածան կապելու նրանց գօտիներին, գարուններին իրենց նախնիների ստուերներն էին իջնում նրանց ծաղկունքի մէջ հանգչելու: Անմահութեան, յաւերժութեան խորհրդանիշ նռնենիրնեի էին նրա շուրջը, աշնանը կանթեղներ էին վառւում նրանց ոստերին, քաղում էին այն ու զարկում որմերին, որ տիեզերական կարմիր լոյս հոսէր այնտեղ: Արքան, իր յաղթանակների պատուին, մեհեանի մարդացած աստուածների բագիններին զոհեր էր մատուցել, նրանց բորբ արիւնը շաղ տուել նրանց ոտքերին:*

*Տիգրան Արքան հնարաւորութիւն չէր ունեցել զօրական օգնութիւն ցուցաբերելու՝ Հռովմի դէմ պատերազմ մղած աներոջ Միհրդատ Պոնտացուն: Նա զբաղել էր իր իշխանութեան դէմ Փիւնիկէում, հարաւային Ասորիքում եւ նրանց դաշնակցած Նաբաթիայի Յուդայի թագաւորութիւնների ընդվզումը զինական ուժով ճնշելուն: Արքան, պարտուած Միհրդատին ու նրա արքունի ու տոհմական աւագանու չորս հազար մարդկանց, Հայաստանում ապաստան էր տրամադրել:*

*Միհրդատի գահը վերականգնելու, Պոնտոսում Հռովմի տիրապետութիւնը տապալելու համար, Տիգրան Արքան նաեւ պատրաստուել էր պատերազմի: Նա ծրագրել էր Կիլիկիայի վրայով թափանցել Լուկուլլոսը կանխել էր Տիգրանի յարձակումը եւ առանց Սենատի որոշման քառասուն հազարանոց բանակով ներխուժել Հայաստան:*

*Տիգրան Արքան, համախմբելով հայոց զինուած ուժերը, 80-90 հազար բանակով դիմագրաւել էր թշնամու զօրքը: Մարտը սկսել էր հայոց ծանր զրահակիր հեծելազօրի դէմ՝ հռովմէական հեծեալ ուժերի գրոհով: Ճակատամարտի վայրի նեղ ձորերում, հայոց ծանր այրուձին ազատ մարտ վարելու հնարաւորութիւն չէր ունեցել: Լուկուլլոսը, 18 հազար հետեւակ զօրքի շրանցումով դուրս էր եկել հայոց բանակի թիկունք եւ անսպասելի գրոհով, դեռեւս մարտ չմտած հայոց հետեւակ զօրքին պարտութեան մատնել: Պարտուել էր հայոց բանակը, հռովմէական գունդերը պաշարել էին Տիգրանակերտը:*

*Տիգրան Արքան, իր Տիգրանակերտ մայր ոստանում, յունական հոծ բնակչութեանը ազատ գործելու, նրանց մշակոյթի տարածմանը սատարելու լայն հնարաւորութիւններ էր ընձեռել: Հռովմէական զօրքերը երկար ժամանակ պաշարել էին ամուր պարիսպներով ու միջնաբերդով հայոց Տիգրանակերտը: Երեւի անհնար էր համարուել երբեւիցէ ու որեւէ գրոհով այն կարողանալ ընկճել: Անբարոյ, ապերախտ յոյն բնակչութիւն, գաղտնի բացել էին քաղաքի դարպասները թշնամու առաջ: Հռովմի կեղեքիչ, ընչաքաղց զօրքը ներխուժել էր քաղաք, կողոպտել այն: Տիգրան Արքայի դեռեւս մարտունակ բանակի 10 հազարանոց մի գունդ, մարտական յանդուգն գործողութիւններով, ճեղքել էր քաղաքը շրջապատած հռովմէական զօրքի շարքերը եւ այն տեղից դուրս բերել արքունի կանանոցը եւ գանձարանը:*

*Տիգրանակերտի ճակատամարտը չէր կանխորոշել հայկական ու հռովմէական պատերազմի ելքը: Արտաշատ մայր ոստանը պաշտպանելու համար, Տիգրան Արքան, համախմբելով իր զօրքը նահանջել էր: Իսկ Հռովմէական զօրքը չկարողանալով վերջնական պարտութեան մատնել հայոց բանակը, վերահաս ձմեռը դիմագրաւելու նպատակով, նահանջել էր դպի Կորտուք գաւառ, որը ապստամբել էր Տիգրան Արքայի դէմ: Հայոց բանակի դէմ նոր ճակատամարտ մղելու համար, վերսկսել էին պատերազմական գործողութիւնները:*

*Տիգրան արքան, խելամտօրէն խուսափել էր դաշտային մարտերից եւ յանկարծակի գրոհներով ու լեռնային կռիւներով խափանել էր Լուկուլլոսի բանակի պարէնի մատակարարումը: Հակառակ առաջացած տարիքին, Տիգրան Արքան անձամբ գլխաւորել էր հայկական այրուձին, իսկ հետեւակ զօրքի ղեկավարումը վստահել աներոջ՝ Պոնտացի Միհրդատին: Տիգրան Արքան, մարտավարական բարձր հմտութեան շնորհիւ, կարողացել էր հռովմէական զօրքերը պահել հայկական հեծելազօրի ու հետեւակի մէջտեղ, սպառնալով թիկունքից հարուածել նրանց:*


# ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայնել՝*
(818) 246-0125

Վարձման գներն են՝
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ $ 400
Long Weekend-ների համար՝ $ 500
Մէկ շաբաթուայ համար՝ $ 675
Մէկ ամսուայ համար՝ $ 1450


Հայ news am

# Everyday Low Prices!

MISSION Wine & Spirits

Southern California's Premier Wine & Spirits Superstore

**3 LOCATIONS TO SERVE YOU**

**GLENDALE**
825 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91202
(818) 242-0683 • Mon-Sat. 9AM-8PM • Sunday 10AM - 4PM

**PASADENA**
1785 E Washington Blvd., Pasadena, CA 91104
(626) 794-7026 • Mon-Sat. 9AM - 8PM

**SHERMAN OAKS**
13654 Burbank Blvd., Sherman Oaks, CA 91401
(818) 785-6529 • Mon-Sat. 9AM - 8PM

GREY GOOSE VODKA – ALL FLAVORS – $21.99

ARARAT – 3 YR ARMENIAN BRANDY – $12.99

BELUGA – NOBLE RUSSIAN VODKA – $22.99

Dewar's "White Label" 1.75L – $24.99

roberto cavalli VODKA 1.75L – $49.99

CÎROC VODKA – ALL FLAVORS – $17.99

BACARDI – LIGHT OR GOLD – $8.99

PUTINKA – LIMITED EDITION – $22.99

JOHNNIE WALKER BLUE LABEL – $119.99

CHIVAS REGAL 12 – BLENDED SCOTCH WHISKY – $15.99

SKYY VODKA – ALL FLAVORS – $8.99

STOLICHNAYA RUSSIAN VODKA 1.75L – $18.99

TEQUILA CAZADORES – BLANCO OR REPOSADO – $19.99

Ketel One VODKA – $16.99

Hennessy COGNAC VS – $19.99

TEQUILA Don Julio 1942 – $79.99

Tsar Alexander I – VSOP COGNAC – $19.99

TEQUILA PATRÓN SILVER – $31.99

El Massaya – ARAK – $20.99

NOY – 7 YR ARMENIAN BRANDY – $19.99

*This ad expires on 06/18/11 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.